

of. Proprietary

Superintendent

891.99
10-71

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

391.99

12-71 44

Մ Ո Ւ Ր Ա Կ Ո Ւ Յ Տ

ԴՐԱԾ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՎ,

~~1348~~

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՂԱՆ 1936

22.04.2013

31384

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԸ

1. Քրեատափոր
2. Աննա
3. Ռիմա
4. Արմեն
5. Զարուհի
6. Ալվան
7. Մարգո
8. Մի Պորտֆեւալոր

Պատ. խմբագիր Սիրա
Տեխ. խմբագիր Տ խ ա չ վ ա ն Բ Յ ա ն
Սրբագրիչ Հ. Դ ո լ ու լ խ ա ն Ե ա ն

Պետհրատի տպարան
Գլավիլիտի լիազոր 305, Պատվեր 1241,
Հրատ. 3518, տիրաժ 4000

14442-57

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Ա. Ր. Ա. Ր.

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Պ. Ա. Տ. Կ. Ե. Ր.

Մի ընդարձակ սենյակ, սեղան, աթոռներ, մի անկյունը շիրմա-
սենյակի խորում ապակյա մի դուռ, վոր տանում է պաշտոնա-
դառն յերկու կողմերի վրա լուսամուտներ: Լուսամուտներից
յեկ ապակյա դռներից յերեկում են բլուրներ, վորոնց վրա ծա-
ռերը ծաղկել են: Վաղ գարուն է: Առաս լույս կա:

Մտնում է Մարգոն ինչ վոր կիսատ մի խոսք վերջացնելով:

ՄԱՐԳՈ. (Հեզմեղան) Այո, անմիջապես... (հարդար-
ումներ անելով): Ամուսինս վոր դա՛ ինձ անմի-
ջապես լուր տո՛ւր... Այո՛, անմիջապես, տիկի՛ն,
լուր տո՛ւր. հետո ի՞նչ... Ձե՛, յես չեմ ամուսնա-
նա... Այսպես լավ է... Ձեմ ուզում, վիճի՛, չեմ
ուզում.

Մտնում է Քրիստափորը: Գեղեցիկ յեկ բարձրահասակ
տղամարդ է, 40 տարեկան:

ՔՐԻՍՏԱՓ. Մարգո, ի՞նչ չես ուզում:

ՄԱՐԳՈ. Ամուսին, Քրիստափոր ի՞վանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Ո՞վ քեզ ամուսին առաջարկեց:

ՄԱՐԳՈ. Յես ինքս:

ՔՐԻՍՏ. Ի՞նչ:

ՄԱՐԳՈ. Այո, ինքս ել մերժեցի:

ՔՐԻՍՏ. Իսկ ի՞նչու մերժեցիր:

ՄԱՐԳՈ. Մի որ կարող ե ինձ չսիրել, իսկ յես այդ
չեմ տանի:

ՔՐԻՍՏԱՓ. Յեթե ամուսինդ քեզ չսիրի, դու ես մե-
ղավոր, իսկ յեթե դու չսիրես՝ նա ե մեղավոր:

ՄԱՐԳՈ. Դժվար ե հասկանալ ձեր միտքը, Քրիստա-
փոր իվանիչ:

ՔՐԻՍՏ. Մի որ կհասկանաս: Լրագրերը բերե՛լ են:

ՄԱՐԳՈ. Այո:

Քրիստափորը նստում ե սեղանի առաջ յեվ սկսում ե էա-
րալ. Մարգոս դուրս ե գնում: Քիչ անց՝ մտնում ե Ան-
նան: Գեղեցիկ կին ե, բայց 45-ն անց, մազերն արդեն
սպիտակած:

ԱՆՆԱ. (Մոտենալով Քրիստափորի սեղանին, նստում ե
նրա դիմաց յեվ լուռ դիտում: Բավական յերկար
դիտելուց հետո՝ զսպված ջղայնությամբ) Քրիստա-
փոր:

ՔՐԻՍՏԱՓ. (Առանց զուլսը վեր բարձրացնելու լրագրից)
Լսում եմ:

ԱՆՆԱ. Պիտի շարունակես:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչ:

ԱՆՆԱ. Լրագրի ընթերցումը:

ՔՐԻՍՏԱՓ. Այո:

Տիրում ե լուրջուն: Աննան մի քանի անգամ ջղային
շարժումներ ե անում արտի վրա: Յերկար սպասելով
յեվ տեսնելով, վար ընթերցումը չի վերջանում՝ ավելի
բարձր տանով:

ԱՆՆԱ. Քրիստափոր...

ՔՐԻՍՏԱՓ. Լսում եմ:

ԱՆՆԱ. Սպասում եմ:

ՔՐԻՍՏԱՓ. Մի բոլե:

Աննան նորից ե սպասում: Քրիստափորը լրագրի ընթեր-
ցումը շարունակում ե յեվ, բոտ յերեվայթին, նպատակ
չունի վերջացնելու:

ԱՆՆԱ. (Վոսք հասակին խփելով) Քրիստափոր:

ՔՐԻՍՏԱՓ. (Ջղայնացած) — Աննա:

Յերկար ժամանակ իրար յերես են նայում:

ԱՆՆԱ. Խոսիր:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչ խոսեմ:

ԱՆՆԱ. Վոչինչ չունես ասելու:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ:

ԱՆՆԱ. Վոչ մի բան չունես ասելու:

ՔՐԻՍՏԱՓ. Յես կարծում եյի դու ունես ասելիք:

ԱՆՆԱ. Ուրեմն վոչ մի ասելիք չունես:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ:

Լուրջուն: Հանկարծ Աննան սկսում ե լաց լինել յեվ
հեկեկալ:

ՔՐԻՍՏԱՓ. (Վեր կենալով՝ մոտենում ե Աննային, բնե-
րեն զուլսը բարձրացնում վեր, նայում նրա աչե-
րին յեվ համբուրում: Աննան ժպտում ե, արքում
արցունքներ:)

Այ, միշտ այսպես, ժպիտ ե վոչ թե արցունք:

ԱՆՆԱ. Յես ել ուզում եմ միշտ ժպտալ:

ՔՐԻՍՏ. Ինչո՞ւ չես ժպտում ապա:

ԱՆՆԱ. Չես թողնում:

ՔՐԻՍՏԱՓ. Յես:

ԱՆՆԱ. Այո, դու:

ՔՐԻՍՏԱՓ. Ուրեմն միշտ պետք ե համբուրեմ, վոր
ժպտաս:

ԱՆՆԱ. (Փաթաթվելով Քրիստափորի վզին) Այո, այդպես
ե: Առանց համբույրի կինը չի ապրում:

ՔՐԻՍՏԱՓ. Ուրեմն այն կանայք, վորոնք...

ԱՆՆԱ. (Ընդմիջելով, ձեռք Քրիստափորի բերանին) Չկան
այդպիսի կանայք, Քրիստափոր, ամեն կին համ
բուրվում ե:

ՔՐԻՍՏԱՓ. Լսիր, Աննա: Դու գիտես, վոր յես չափա-
զանց զբաղված եմ, դու գիտես, վոր յես զբաղ-
ված եմ գիտական կարևոր պրոբլեմով:

ԱՆՆԱ. Դիտեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Ուրեմն մի խանդարիր:

ԱՆՆԱ. Յես քեզ խանդարում եմ:

ՔՐԻՍՏԱՓ. Այո:

ԱՆՆԱ. Ինչո՞վ:

ՔՐԻՍՏԱՓ. Այ, լացով, փոքրիկ բաները մեծացնե-
լով, մանավանդ արցունքով:

ԱՆՆԱ. Դու կարծում ես փոքրիկ բան ե:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչ:

ԱՆՆԱ. Ինձանով զբաղվելը:

ՔՐԻՍՏԱՓ. Այսինքն՝ չզբաղվելը:

ԱՆՆԱ. Բառախաղով մի զբաղվիր, Քրիստափոր, դու
լուրջ մարդ ես:

ՔՐԻՍՏԱՓ. (Դիմելով նրան յեվ բազմաթիվ անգամ համ-
բուրելով) Ինչքան ժամանակի համար բավական
ե այսքան համբույրը:

ԱՆՆԱ. Միայն այս բոլորի համար:

ՔՐԻՍՏԱՓ. (Յերկար յեվ տպեանգով նայելով նրան)
Աննա, թանկագին իմ Աննա, ի՞նչ ե պատահել
քեզ:

ԱՆՆԱ. (Մոտենալով նրան)— Դու ինձ սիրում եյիր:

ՔՐԻՍՏԱՓ. Այո:

ԱՆՆԱ. Դու գիտես, վոր յես լքեցի իմ ամուսնուն,
ամեն ինչ վոտի տակ առա, զրկեցի տասնհինգ
տարեկան աղջկան հորից: Վերջապես յես իրա-
վունք չունեյի զրկել մի մարդու, մի լեեղճ մար-
դու իր զավակից:

ՔՐԻՍՏԱՓ. Այդ բոլորը...

ԱՆՆԱ. Այդ բոլորն արի, վորովհետե քեզ սիրում ե-
յի: Յերբ մի ամուսնացած կին, այն ել զավակ
ունեցող կին, թողնում ե իր առաջին ամուս-
նուն ե կապվում ե մի ուրիշի հետ՝ նշանակում
ե նա սիրում ե նրան առավել խորը սիրով:

ՔՐԻՍՏԱՓ. Իսկ յեթե յերկրորդ ամուսնուն ել թող-
նի ե կապվի մի յերրորդի հետ...

ԱՆՆԱ. Պիտի կրկնեմ, ուրիշ վնչինչ:

ՔՐԻՍՏԱՓ. Այսինքն՝

ԱՆՆԱ. Այսինքն՝ յերրորդին սիրում ե ավելի խորը
սիրով:

ՔՐԻՍՏԱՓ. Յեվ այսպես շարունակաբար:

ԱՆՆԱ. (Թախծոս, մոռալ) Դու կատակ ես անում:

Տիրում ե լուրքում, Աննայի մոայլությունը խորանում ե:

ԱՆՆԱ. Յես անդառնալի սխալ գործեցի:

ՔՐԻՍՏԱՓ. Սխալ:

ԱՆՆԱ. Այո, մահացու սխալ:

ՔՐԻՍՏԱՓ. Ինձ սիրելով:

ԱՆՆԱ. Այո դու ինձանից հինգ տարով փոքր եյիր...

ՔՐԻՍՏԱՓ. (Ընդմիջելով յեվ մոտենալով նրան, ձեռք

դնելով նրա ուսին) Աննա, յես քեզ շատ անգամ
եմ ասել և դու խոտաացել ես այդ մասին այլ-
ևս չխոսել, բայց ելի: (Բռնելով նրա մազերը)
Քո սպիտակած մազերը դեռ բուրում են թարմ,
ինչպես գարնան խոտը, ինչպես ծաղկած նշենին:

ԱՆՆԱ. Կանայք շուտ են իջնում կյանքի պատենշից:
ՔՐԻՍՏԱՖ. (Պաքթիկ) — Աննա...

ԱՆՆԱ. Ահա դու քառասուն տարեկան ես...

ՔՐԻՍՏԱՖ. Բայց վնչ վնք չի իմանում այդ: Բոլորն
եկ կարծում են, վոր մենք հասակակիցներ ենք:

ԱՆՆԱ. (Յավազին ծիծաղելով) Ո՞վ կարող է խաբել
սիրտը:

ՔՐԻՍՏԱՖ. Նո՛ւ, նո՛ւ (եղյում է նրան):

ԱՆՆԱ. Մոտ է վերջալույսը: Սպիտակ մազեր... Թեր-
ևս քիչ ժամանակվա համար հետաքրքրական,
մինչև անգամ դրավիչ, բայց կապտավուն մութը
կիջնի շուտով և արագորեն կսևանա որը (լաց
է լինում):

ՔՐԻՍՏԱՖ. Լաց մի լինիր, Աննա: Դա ինձ ջգայնաց-
նում ես: Այս բոլորը քեզ վրա ազդում են, վո-
րովհետև որերդ անցնում են դատարկ: Մտիք
աշխատանքի, ծառայի հասարակության: Տես,
ինչե՛ր են կատարվում: Աշխարհը փոխվում է
մեր աչքի առաջ, արագ, տենդաղին: Դու յեր-
բեկցես տեսել ես քանդակագործին աշխատելու:
Կավը, այդ քառսը, քառսային այդ մութ գանգ-
վածը ինչպես ձև է ստանում, ստանում է ի-
մաստ, դառնում է մտածում, պոեզիա: Յե՛վ այդ

դու տեսնում ես քո աչքերով: Ահա վորջ աշխարհի
քառսն է փարատվում, ստանում է նոր և կա-
տարյալ ձև: Մեր յուրաքանչյուր վայրկյանը
խորը իմաստ ունի: Յեթի մենք չկարողանանք
հասկանալ յուրաքանչյուր վայրկյանը, հասկա-
նալ վնչ թե մտքով—դա իր կարգին—այլ նյար-
դային սիստեմի յուրաքանչյուր թելիկով, ա՛ր-
յան յուրաքանչյուր կաթիլով և հոգու յուրա-
քանչյուր թելով՝ կորած ենք:

ԱՆՆԱ. (Աչքեր սրբելով յնվ հավեսակվելով Քրիստափորի
խոսքերից) Քրիստափոր, հասկանում եմ քեզ:

ՔՐԻՍՏԱՖ. Վնչ, չես հասկանում:

ԱՆՆԱ. Հասկանում եմ, խորապես հասկանում եմ,
բայց դո՛ւ ինձ չես հասկանում: Յերբեք:

ՔՐԻՍՏ. Աննա:

ԱՆՆԱ. Շուտով կիջնի կապտավուն մութը: Աստղեր
կբացվեն, բայց կապույտը կխորանա, կսկսի
անլուսաբաց գիշերը...

ՔՐԻՍՏԱՖ. (Խղճահարկելով), Աննա, դու դեռ յերիտա-
սարդ ես (գրկելով նրան), քո մարմինը դեռ այն-
պես տաք է...

ԱՆՆԱ. (Վողբազին) Տա՛ք... (ցավագին ծիծաղում է):

ՔՐԻՍՏԱՖ. Վերջապես չափահաս կին ես:

ԱՆՆԱ. (Վիրավորված) Այո, այո, չափահաս:

ՔՐԻՍՏԱՖ. Յես այդ մտքով չասացի:

ԱՆՆԱ. Ձե՛մ մեղադրում քեզ:

ՔՐԻՍՏԱՖ. Առհասարակ դու յերբեք չպետք է մտա-
ծես հասակի մասին:

ԱՆՆԱ. (Հրճվազին) Հասակի մասին (փաթաթվում է Քրիստափորին):

Քրիստափորը տեղում է նրան իր կրծքին յեղ յերկաթ համբուրում: Մտնում է Արմենը: Քառնեինգ տարեկան յերեսառարդ է, կլոր յեղ սեղ շրջանակով ակնոց է կրում:

ԱՐՄԵՆ. (Տեսնելով ամուսիններին իրար փաթաթված) Նե-
րեցեք... Յես չեյի կարծում, վոր այսպիսի մի
ժամում... այսպիսի յեռանդով...

Անճամ շփոթվում է յեղ ամաչում, բայց Քրիստափորը
բարձր տրամադրությամբ է ընդունում Արմենին:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչինչ: Յերբեմն մարդիկ իրենց այնպես,
ուրիշ տեսակ են զգում...

ԱՐՄԵՆ. Այո, և տեսողներն ել, բռնադատված, ըս-
կում են ուրիշ տեսակ զգալ իրենց, Քրիստա-
փոր ի վանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Բնական յերևույթ է:

ԱՐՄԵՆ. Այո, հափազանց բնական:

ՔՐԻՍՏԱՓ. Նո՛ւ, Արմեն, ի՞նչպես անցավ վերջին
փորձը:

ԱՐՄԵՆ. Անհաջող:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչպես:

ԱՐՄԵՆ. Տեսեք (փախկան սրվախի մեջ ցույց է տալիս
արդյունքը):

ՔՐԻՍՏԱՓ. (Յերկար դիտելուց հետո) Վատ չէ: Ստացված
գույնը հափազանց հետաքրքրական է:

ԱՆՆԱ. Յես կարծում եմ, վոր զուր էք աշխատում
այդ պրոբլեմի վրա:

ԱՐՄԵՆ. Ի՞նչու:

ԱՆՆԱ. Փանտաղիա յե, ուրիշ վոչինչ:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, ֆանտաղիա յե: Գիտությունը ֆան-
տաղիա յե: Վոչ մի պոետ այնքան կարիք չու-
նի ֆանտաղիայի, վորքան գիտնականը: Մենք
յերևակայում ենք: Որինակ՝ յերևակայում ենք,
վոր ազոթը, վոր միայն բուսական կերի միջո-
ցով անցնում է կենդանուն, կարելի յե տալ
կենդանուն ուղղակի, իբրև արվեստական կեր:

ԱՆՆԱ. (Մեղմ փնթաղ):

ՔՐԻՍՏԱՓ. Զուր է հեղնությունը: Անճա, սա ֆան-
տաղիա յե, պարզապես մի յերազ, բայց այդ
յերազի թևերով է, վոր գիտնականը հասնում է
կոնկրետ իրականություն: Լեոնարդո դա Վին-
չին յերազեց, վոր մի որ մարդը կարող է թռու-
չել ողում, ինչպես արծիվը: Յեղ անհամեմատ
թռչում ենք: Յես յերազում եմ, վոր ազոթը,
մի վորևե ձևով, կարելի յե կեր դարձնել և
մոտեցանել անասուններին:

ԱՆՆԱ. Ապարդյուն յերազ:

ՔՐԻՍՏԱՓ. Կտեսնենք:

Մտնում է Մարգոն:

ՄԱՐԳՈ. Հեռագիր, տիկին:

ԱՆՆԱ. (Անճալությամբ) Տեսնեմ (վերցնում է հեռագիրը
յեղ կարդում) Ռիման... Քրիստափոր, Ռիման
գալիս է:

ՔՐԻՍՏԱՓ. (Վերցնելով հեռագիրը յեղ կարդալով) Յերե-
կոյան այստեղ կլինի:

ԱՆՆԱ. (Գիտիվե ուրախացած) Այո, յերեկոյան... Ռի-
ման... գնամ կայարան:

ՔՐԻՍՏԱՓ. (Միծաղելով) Դեռ վեց ժամ կա:

ԱՆՆԱ. Չորս տարի յե չեմ տեսել: Ռիմա... Քրիստա-
փոր...

ՔՐԻՍՏԱՖ. (Աւմենիկ) Արմեն, բազմանում ենք:

ԱՐՄԵՆ. (Ապշահար յեվ փառացած կանգնած է յեվ վո-
չիկն չի հասկանում):

ՔՐԻՍՏԱՖ. (Խփելով Աւմենի ուսին) Ասում եմ, բազ-
մանում ենք, չորս վոտանի եյինք՝ գառնում
ենք վեց վոտանի:

ԱՆՆԱ. Ռիմա, Ռիմա, Ռիմա...

ՔՐԻՍՏԱՖ. Ինչքան մեծացած կլինի հիմա:

ԱՆՆԱ. Մարգո, գնանք կայարան:

ՔՐԻՍՏԱՖ. Հո չգտնեցիր: Դեռ վեց ժամ կա, ասում
եմ:

ԱՆՆԱ. Միենույն է, չեմ համբերում: Գնանք, Մար-
գո:

Աճառ յեվ Մարգոն դուրս են գնում:

ՔՐԻՍՏԱՖ. (Նրանց գնալուց հետո՝ հանկարծակի թխուրտ
է, յեղիար նայում է Աւմենիկ) Սկսվում է նոր և
տխուր մի բան:

ԱՐՄԵՆ. (Դեռեկա ապշահար) Վոչինչ չեմ հասկանում:

ՔՐԻՍՏԱՖ. (Ինքն իրեն) Այն ժամանակ դեռ փոքր եր,
իսկ հիմա:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, բացարձակապես վո-
չինչ չեմ հասկանում, Ռիմա... չորս վոտանի...
բազմանում ենք... նոր և տխուր մի բան... Վո-
չինչ չեմ հասկանում:

ՔՐԻՍՏԱՖ. Նստիր և լսիր:

Նրանք նստում են սեղանի յերկու կողմերին՝ արմուկ-
ները հենած սեղանին: Մի պահ Քրիստափորը լուռ է,
մտախոհ:

ՔՐԻՍՏԱՖ. Դու գիտես, վոր սրանից հինգ տարի ա-
ռաջ Աննային յես խեցի մի մարդուց:

ԱՐՄԵՆ. Լսել եմ:

ՔՐԻՍՏԱՖ. Աննան հետը բերեց իր աղջկան: Այն
ժամանակ կլինեք 15-16 տարեկան...

Լուսյուն: Քրիստափորը կարծես վերադարձ է անց-
յալը:

ԱՐՄԵՆ. Լսում եմ, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՖ. Խելոք աղջիկ եր, բայց մոր հետ ունե-
ցան անախորժություններ: Փոքր եր, չեր հաս-
կանում, հոր աղքատկանները գրգռում եյին... իմ
գեմ, մոր դեմ:

ԱՐՄԵՆ. Իսկ հայրը:

ՔՐԻՍՏԱՖ. Հայրը գնաց Ռուսաստան: Մենք վերո-
շեցինք աղջկան ուղարկել ուսանելու և ուղար-
կեցինք:

Լուսյուն:

ԱՐՄԵՆ. Հետո:

ՔՐԻՍՏԱՖ. Ահա վերադառնում ե:

ԱՐՄԵՆ. Վոչ մի վատ բան չեմ տեսնում գրանում,
Քրիստափոր Իվանիչ: Արդեն մեծացած աղջիկ,
կհասկանա բոլոր խնդիրները:

ՔՐԻՍՏԱՖ. Վոչ, Արմեն, լավ չե:

ԱՐՄԵՆ. Ինչո՞ւ:

ՔՐԻՍՏԱՖ. (Վեր կենալով, մոտենալով Աւմենիկ յեվ ձեռ-
քը դնելով նրա ուսին) Լավ չե: Մայրը սկսել է
զանազան բաներ—ինձմով չես զբաղվում, վեր-
ջալույս, սպիտակ մազեր, մուլթը խորանում է
—աղջիկը պետք է բռնի բնականորեն մոր կողմը, և
ահա կսկսվի քառսը, ահա նոր և տխուր բանը:
Լուսյուն:

ԱՐՄԵՆ. (Լռությունից հետո՝ հազիվ համարձակվելով)
Քրիստափոր Իվանիչ, ներեցեք ինձ, քանի տա-
րեկան ե ձեր կինը:

ՔՐԻՍՏԱՓ. Արդեն սպիտակ մազեր...

ԱՐՄԵՆ. (Պապիրոս ե վառում):

ՔՐԻՍՏԱՓ. (Յերկաբ լռությունից հետո) Չարուհին յե-
կէլ ե:

ԱՐՄԵՆ. Այո, աշխատում ե:

ՔՐԻՍՏԱՓ. Մենք ել գնանք աշխատանոց ե շարու-
նակենք փորձերը:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, մի ըոպե:

Քրիստափորը կանգ ե առնում:

ԱՐՄԵՆ. Դուք ինչո՞ւ ամուսնացաք ամուսին ե զա-
վակ ունեցող կնոջ հետ:

ՔՐԻՍՏԱՓ. Ինչո՞ւ:

ԱՐՄԵՆ. Այո:

ՔՐԻՍՏԱՓ. Սիրեցի:

ԱՐՄԵՆ. Բայց դուք չմտածեցի՞ք, վոր...

ՔՐԻՍՏԱՓ. (Ընդմիջելով) — Մտածումն ի՞նչ կապ ունի
սիրո հետ:

ԱՐՄԵՆ. Չե՞ վոր...

ՔՐԻՍՏԱՓ. Վո՛չ, Արմեն, վո՛չ, վոչինչ ավելի հեռու չե
երարից, վորքան միտքը ե սիրտը:

Քրիստափորը դուրս ե գնում, իսկ Արմենը մտածկա-
սմում ե կանգնած տեղում:

Վ ԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Միեմույն տեսարանը: Յերեկո:

Անճան յե՛վ Ռիման խոսակցելով մտնում եմ պտտշտամբից:

ԱՆՆԱ. (Պատշգամբի ապակյա դուռ մեջ կեցնելով Ռի-
մային) Ռիմա՛, այս մասին վո՛չ մի խոսք Քրիս-
տափորի մոտ:

ՌԻՄԱ. Իսկ յեթե ինքը...

ԱՆՆԱ. Յեթե ինքը սկսի՝ ուրիշ հարց: Յեթե իմանա,
վոր յես քեզ ասել եմ, անպայման պետք ե կար-
ծի, վոր հեգնանքով եմ պատմել: Յես կարծում
եմ, վոր դա նրան խելագարության կհասցնի:

ՌԻՄԱ. Ինչո՞ւ ես այդպես կարծում:

ԱՆՆԱ. Կմնաս ե կտեսնես:

ՌԻՄԱ. Բայց յես կարող եմ ասել, վոր այդ մասին
լսել եմ Մոսկվայում:

ԱՆՆԱ. Դա ուրիշ: Կարելի յե:

ՌԻՄԱ. (Արդեն բոլորովին սեմյակ մտնելով) — Մամա,
ի՞նչ ուրախ եմ, վոր վերադարձա, մամա՛, մա-
մո՛չկա՛... Յես կարծում եմ, վոր վո՛չ մի թյուրի-

մացությունն չի պատահի այլևս:

ԱՆՆԱ. Դու արդեն մեծացած աղջիկ ես, իհարկե:

ՌԻՄԱ. Հասկանում եմ քեզ, մամա: Վնչ միայն հասկանում եմ, այլև կարող եմ ապրել և զգալ, ուրտով և հոգով զգալ, մամճչկա...

Անճառ սրբում ե անքեր:

ՌԻՄԱ. Ինչո՞ւ ես լաց լինում, մամա, միթե իմ վերադարձը...

ԱՆՆԱ (Ընդմիջելով) Ուրախությունից եմ լաց լինում:

Մտնում ե Գրիտափորը՝ Արմենի հետ միասին:

ՔՐԻՍՏԱՖ. (Յերկառ նայելով Ռիմային) Աննա, ուրախ ես, չե՞:

ԱՆՆԱ. Միայն ուրախ:

ՌԻՄԱ. (Վազում ե դեպի Գրիտափորը, Գրիտափորը նրան համբուրում ե) Գրիտափոր Իվանիչ, ամեն բան մոռացել ես:

ՔՐԻՍՏԱՖ. Վոչինչ չեմ հիշում:

ՌԻՄԱ. Ի՞նչ լավ ե:

ՔՐԻՍՏԱՖ. (Յես-յես գնալով յեղ նայելով նրա հետաքիին) Սա ի՞նչ ե, ի՞նչ հասակ ե, կարծես ամենաբարձր շուշանն ե պարտեզում:

ՌԻՄԱ. (Ուրախ ծիծաղելով, նորից փաթաթվում ե Քրիտափորին) Իսկ դու բոլորովին չես ծերացել, նույն յերիտասարդ մարդը, նայիր մայրիկիս, արդեն...

ՔՐԻՍՏԱՖ. (Ընդմիջելով յեղ կեսալմբելով) Ռիմա...

Անճառ կուլ ե տալիս դուռն արյունեներ

ՔՐԻՍՏԱՖ. Սպիտակ մազերը վոչինչ չեն նշանակում: Աննան ինձանից յերիտասարդ ե: Այո բոլորից նա կարող ե...

ԱՐՄԵՆ. (Տեսնելով վոր վոչ վոճ չի հիշում իրեն) Յոռություն:

ՔՐԻՍՏԱՖ (Ընդուն յես դառնալով) Ա՛խ ինչպե՞ս մոռացա: Ռիմա, ծանոթացիր, Արմեն Սարոյան, քիմիայի իմ աստիտենտը:

ՌԻՄԱ. (Ձեռք յերկարում ե) Ուրախ եմ:

ԱՐՄԵՆ. (Մոտենալով յեղ ձեռք սեղմելով) Այնքան ել անկարևոր մարդ չեմ:

ՌԻՄԱ. Դե՞ք եք, վոր Գրիտափոր Իվանիչի հետ աշխատում եք անասուններին կեր պատրաստելու պրոբլեմի վրա:

ԱՐՄԵՆ. (Ապաճ ցայում ե մեկ Աննային յեղ մեկ՝ Գրիտափորին) Իսկ ո՞վ ասաց ձեզ այդ:

ՌԻՄԱ. Յես այդ մասին լսել եմ դեռ Մոսկվայում:

ՔՐԻՍՏԱՖ. Դու չե՞ս հաշտում:

ՌԻՄԱ. Յես չգիտեմ մանրամասները: Ուզում եմ քեզանից իմանալ, թե ինչի՞ վրա յեք աշխատում-դու և այս ընկերը:

ՔՐԻՍՏԱՖ. Ընկեր Սարոյանը:

ԱՐՄԵՆ. Պարզապես՝ Արմեն:

ՔՐԻՍՏԱՖ. Շուտափույթ ե, Արմեն:

ՌԻՄԱ. (Թեքել ծիծաղում ե):

ՔՐԻՍՏԱՖ. Լսիր, Ռիմա, անասունները խոտ են ուտում, չե՞:

ՌԻՄԱ. Այո, ուտում են:

ՔՐԻՍՏԱՖ. Այդ խոտի մեջ...

ԱՐՄԵՆ. Կամ ընդհանրապես բուսականության մեջ:

ՔՐԻՍՏԱՖ. Այո, բուսականության մեջ ի՞նչն ե, վոր հարկավոր ե անասուններին...

ՌԻՄԱ. Զգիտեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Ազոթն է, ազոթն է, վոր նրանց հարկա-
վոր է: Ազոթը անասունին...

ԱՐՄԵՆ. Յեվ մարդուն:

ՔՐԻՍՏԱՓ. Դե, իհարկե, բոլորս ել անասուններ ենք:
Ազոթը անասունին հասնում է բուսականու-
թյան միջոցով: Յեթե լինի մի վորեւե միջոց, վոր
կարելի լինի ազոթը հասցնել անասունին
առանց բուսականության՝ նա կապահովվի սննդ-
դամթերքով: Հասկանալի չե՞:

ՌԻՄԱ. Այո, հասկանալի չե:

ՔՐԻՍՏԱՓ. Նո՛ւ, պարզ ասած՝ յես և Արմենը դրա վրա
ենք աշխատում:

Տիրում է լուսքյուն: Ռիման չափազանց լրջամուտ է, մը-
տածում, հետզհետե տխրություն է տիրում վրան:

ՌԻՄԱ. Զուր չե՞ր, վոր ընկեր Սարոյանը հիշեցրեց
մարդը, ուրեմն յեթե հաջողվի՝ մարդը ևս կա-
րող է սնվել ազոթով և բավարարվել:

ՔՐԻՍՏԱՓ. Այո: Յեվ հափշտակիչ հեռանկարը դա չե:
ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչ (բռնելով նրան) ապա
ուտելու հաճոյքը:

ԱՆՆԱ. Ռիմա, կարծես այնպես շատակերն ես, վոր
փնտրում ես ուտելու հաճոյքը:

ՌԻՄԱ. (Լուրջ) Մամա, միայն քիչ ուտողներն են
հաճոյք ստանում (Քրիստափորին) Քրիստափոր
Իվանիչ, պատասխան տուր ինձ:

ՔՐԻՍՏԱՓ. Ուտելու հաճոյքը...

ԱՐՄԵՆ. Մենք այդ մասին յերբեք չենք մտածել:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, յերբեք:

ՌԻՄԱ. Այդ ձևով թերևս կարելի չե շատ բան փո-
խարինել:

ՔՐԻՍՏԱՓ. Որինակ:

ՌԻՄԱ. Որինակ... այս ըոպեյիս չեմ կարող տեսլ:

ԱՐՄԵՆ. Որինակ՝ սերը:

ԱՆՆԱ. (Հեգնակալ) Այո, սերը, կարելի չե սիրո տեղ
ազոթ կուլ տալ:

ՔՐԻՍՏԱՓ. (Սրճնեղած) Դուք վուզարացնում եք
հարցը:

ՌԻՄԱ. Թերևս ճիշտ է, վուզարացնում ենք, բայց
հավատացեք, պետք է լրջորեն մտածել այդ մա-
սին:

ՔՐԻՍՏԱՓ. (Զեռք դնելով Ռիմայի ուսին), Նո՛ւ, Ռիմա,
դու ինձ ասա, գո՛հ ես, վոր վերադարձար:

ՌԻՄԱ. Զափաղանց: Ուրախ եմ ձեր տանը:

ՔՐԻՍՏԱՓ. Մեր տանը:

ՌԻՄԱ. Այո, մեր տանը, իմ տանը:

ՔՐԻՍՏԱՓ. Ավելի ճիշտ:

ԱՆՆԱ. (Մոտենալով յեվ գրկելով Ռիմային) Մրանից հե-
տո ամեն ինչ լավ կլինի, ավելի և ավելի ու-
րախ:

ՔՐԻՍՏԱՓ. (Շոյելով Աննայի մեղերը) Կլինի պայծառ
լուսաբաց և վո՛չ վերջալույս:

Մտնում է Զարուհին աթոռանոցի սպիտակ հագուստը
հագին:

ԶԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ, վերջին փորձը հրա-
շալի տրդյունք տվեց: Տեսե՛ք՝ (ցույց է ցալիս
ֆիլիտիան մի սրվակի) կարևորն այն է, վոր ար-

դյուհեքը ստացվեց այնպես, ինչպես նախատես-
սում եյիք:

Բոլորը հավաքվում են յնվ սկսում են դիտել քրվակը,
վորը Զարուհին բռնել է լույսի դեմ, բացի Աննայից,
վորի դեմքի վրա յերեւում է տարակուսումք յնվ հեգ-
նանք:

ՔՐԻՍՏԱՖ. Արմեն, հասնում ենք:

ԱՐՄԵՆ. (Հալիւսակված) Գնանք և շարունակենք:

ՔՐԻՍՏԱՖ. Գնանք:

Քրիստափորը, Արմենը յնվ Զարուհին ազգվում են դե-
պի դուռը: Քրիստափորը՝ շեմքից:

Յես շուտով:

ՌԻՄԱ. (Փոքր լուսւթյունից հետո) Մամա, այնուամե-
նայիով հետաքրքրական է:

ԱՆՆԱ. (Խորատուզված) Ի՞նչը:

ՌԻՄԱ. Պրորբւմը:

ԱՆՆԱ. Ի՞նչ պրորբւմ:

ՌԻՄԱ. Ազոթի պրորբւմը:

ԱՆՆԱ. Ազոթի պրորբւմը: Դա խելագարութեան ճա-
նապարհ է:

ՌԻՄԱ. Մամա, զարմանում եմ: Ի՞նչ կա այստեղ
խելագարութեան:

ԱՆՆԱ. Ռիմա, ինչո՞ւ չես հասկանում ինձ:

ՌԻՄԱ. (Նստելով Աննայի կողքին) Մամա, ինչ վոր մի
թախիժ քեզ ճնշում է:

ԱՆՆԱ. Թախիժ:

ՌԻՄԱ. Այո, ահա՛վոր մի թախիժ: Յես յերեւոա չեմ,
դու ինձ չես կարող խաբել, յես տեսնում եմ,
յես զգում եմ:

ԱՆՆԱ. Մոռացի՛ր, Ռիմա:

ՌԻՄԱ. Պե՞տք է ասես, մամա, ինձանից վոչինչ
չպետք է թաղցնես:

ԱՆՆԱ. Ինձ ճնշում է...

ՌԻՄԱ. Ի՞նչը, մամա:

ԱՆՆԱ. Ազոթը:

ՌԻՄԱ. (Ծիծաղելով) — Մամա, ելի դու ինձ յերեւոյի
տեղ ես դնում:

ԱՆՆԱ. Վոչ, ճշմարիտ եմ ասում, ինձ ճնշում է այդ
ազոթը, ազոթի պրորբւմը:

ՌԻՄԱ. Չեմ հասկանում:

ԱՆՆԱ. Քրիստափորն ընկել է այդ պրորբւմի յետեից
և այլևս վոչ մի ուշադրութեան իր կնոջը...

ՌԻՄԱ. Մամա...

ԱՆՆԱ. Ռիմա, դու ինձ յերբեք չես հասկանալու...

ՌԻՄԱ. Ինչո՞ւ:

ԱՆՆԱ. Դու կին չես:

ՌԻՄԱ. Կին չեմ, ապա ի՞նչ եմ:

ԱՆՆԱ. Աղջիկ ես:

ՌԻՄԱ. Միթե աղջիկը կին պոեմի նախերգանքը չե:

ԱՆՆԱ. Միայն նախերգանքը:

ՌԻՄԱ. (Թեքել ծիծաղում է) Ա՛խ, մամա, մամա, ին-
չե՛ր եմ լսում: Լսի՛ր, մամա, դուր թախիժ է քո
թախիժը, յեթե, իհարկե միայն հիմնված է այդ
բանի վրա:

ԱՆՆԱ. Ռիմա...

ՌԻՄԱ. (Ընդմիջելով) Քո ամուսինը քեզ դաժաճա-
նում է:

ԱՆՆԱ. Վոչ:

ՌԻՄԱ. Ուրե՛մն.

ԱՆՆԱ. Յե՛վ վերջացածի հարցը:

ՌԻՄԱ. Այո՛:

ԱՆՆԱ. (Յավազին ծիծաղելով) Ռիմա՛, աղջիկ ես:

ՌԻՄԱ. Ձե՛մ ժխտում:

ԱՆՆԱ. Յենթադերենք, վոր...

ՌԻՄԱ. (Ընդմիջելով) Լսի՛ր, յեթե դու արգելք հան-
դիսանաս քո ամուսնու աշխատանքներին, յե՛ս
քեզ կդատապարտեմ:

ԱՆՆԱ. Արգելք չեմ հանդիսանում:

ՌԻՄԱ. Հանդիսանում ես, մամա:

ԱՆՆԱ. Դու ինձ չես հասկանում:

ՌԻՄԱ. Միենույնը պատահեց և իմ հոր հետ...

ԱՆՆԱ. (Ընդմիջելով) Խնդրում եմ, Ռիմա՛, հորդ խոս-
քը մի անի:

ՌԻՄԱ. (Տխուր) Լավ:

Մտնում ե Գրիստափորը յե՛վ տեսնում ե յերկուսի՛ն
տխուր յե՛վ մի քիչ Կայլալված:

ՔՐԻՍՏԱՖ. (Յերկար նայելուց հետո) Աննա՛, ի՞նչ ե
պատահել:

ԱՆՆԱ. Վոչինչ, Քրիստափոր:

ՔՐԻՍՏԱՖ. (Հարցախնդրող նայվածով) Ռիմա՛:

ՌԻՄԱ. Մոռանանք այդ: Ի՞նչպես յեղավ ձեր գործը:

ԱՆՆԱ. Նորից ազոթը:

ՌԻՄԱ. Մամա...

ԱՆՆԱ. Յես գնացի: (Ռիմային) Հետո կգաս ինձ մոտ:

Գնում ե: Նրա գնալուց հետո տիրում ե լուրջուն:

ՌԻՄԱ. (Վազելով հանկարծ Քրիստափորին) Քրիստափոր
Իվանիչ, մի ընկճվիր, շարունակիր քո գործը:

ՔՐԻՍՏԱՖ. (Տխուր յե՛վ հուսահատ) Անհոգի յե աշխար-
հը, Ռիմա՛:

ՌԻՄԱ. Վոչ բոլոր աշխարհը:

ՔՐԻՍՏԱՖ. Նոր չե այս մորմոքը, վոր այրում ե իմ
սիրտը, հին ե:

ՌԻՄԱ. Ձպետք ե ընկճվել:

ՔՐԻՍՏԱՖ. Ամեն ինչ կարելի յե տանել, բացի ընա-
նեկան ծանրությունից:

ՌԻՄԱ. Ի՞նչ ե պատահել ձեզ, Քրիստափոր Իվանիչ,
քեզ և մամային:

ՔՐԻՍՏԱՖ. Աննան քեզ վոչինչ չասաց:

ՌԻՄԱ. (Աչքերը կախելով) Ասաց:

ՔՐԻՍՏԱՖ. Նո՛ւ, ի՞նչ ես կարծում, ի՞նչ ե քո անձնա-
կան տեսակետը:

ՌԻՄԱ. (Փաքալվելով Քրիստափորին) Մաման սխալ ե
կարծում: Բայց ների՛ր նրան:

ՔՐԻՍՏԱՖ. (Յերկար համբուրում ե նրան):

ՌԻՄԱ. (Համբուլից հեռված լել ապեւած՝ նայում ե Քրի-
ստափորին):

ՔՐԻՍՏԱՖ. (Նորից գրկելով նրան) Ռիմա՛, մի բան
պետք ե խոստովանեմ քեզ: Անկեղծորեն, սըր-
տաբաց: Յես կարծում եյի, վոր դու անա դալիս
ես, մայրդ կպատմի քեզ մեր հարաբերություն-
ները, դու կըռնես նրա կողմը և կաթեղծվի մի
զարհուրելի քառս:

ՌԻՄԱ. Իսկ հիմա:

ՔՐԻՍՏԱՖ. Հիմա հավատում եմ, վոր մեր տանը
վառվեց մի պայծառ լույս, մեր տան մթության
մեջ ընկավ մի շողշողուն ասաղ:

Ռիման հափշտակված յերկար նայում ե Քրիստափորին:

ՔՐԻՍՏՍՖ. Յես լսում եմ քո նայվածքը:
ՌԻՄԱ. Իսկ ի՞նչ ե ասում այդ նայվածքը:
ՔՐԻՍՏՍՖ. (Հրկվագին) — Ասում ե...

Համարում ե յեվ յերբ Ռիման ազատվում ե Յրա քե-
վերից, բարձր յեվ հրկվագին ծիծաղելով, փախչում ե դե-
պի պատշգամբ: Քրիստափորը մնում ե կանգնած տեղում
ապշած: Նայում ե դեպի պատշգամբը: Դռնից մտնում ե
Ալվանը, Տեանելով Քրիստափորին այդ վիճակում կանգ-
նում յեվ մայում ե, բայց տեսնելով, վար յերկար ե տե-
վում կանչում ե՝

ԱԼՎԱՆ. Քրիստափոր իվանիչ...

ՔՐԻՍՏՍՖ. Ա՛հ, լես կարծեցի Ռիման ե: Ալվան, դու
յես:

ԱԼՎԱՆ. Վերադառնալու ե Ռիման:

ՔՐԻՍՏՍՖ. Ռիման: Ռիման սյնտեղ ե (մի պահ հե-
փեցակված կանգ ե առնում) Իսկապես, վորտեղ
ե Ռիման: Այո, հար թռավ Ռիման (գնում ե
պատշգամբ յեվ կանչում) Ռիմա, Ռիմա...

ՌԻՄԱ. (Դրսից) Գալիս եմ...

ՔՐԻՍՏՍՖ. (Պատշգամբից ներս մտնելով) Ռիման դա-
լիս ե... բաց յերևի շուտով նորից կթռչի...

ԱԼՎԱՆ. Ո՛ւր կթռչի, Քրիստափոր իվանիչ:

ՔՐԻՍՏՍՖ. Աղջիկը հարկադրված ե թռչել... աղջիկը կամ
դեպի մի սիրտ ե թռչում, կամ մի սրտից դուրս:
Մտնում ե Ռիման պատշգամբից յեվ տեսնելով Ալվանին
յերբ ար մայում ե:

ՔՐԻՍՏՍՖ. Չճանաչեցի՞ր...

ՌԻՄԱ. Վճի: Կարծես աչքերը...

ԱԼՎԱՆ. Ռիմա...

ՌԻՄԱ. Ալվան...

Գրկախառնվում եմ:

ՌԻՄԱ. Ինչքան փոխվել ես:

ԱԼՎԱՆ. Շատ եմ փոխվել:

ՌԻՄԱ. Շատ: Աղջիկության վճի մի հեռք չկա, բա-
ցի... ասեսք... աչքերից, ժպտի փոքրիկ ցուլե-
րից:

ԱԼՎԱՆ. Աղջիկությունից, իհարկե, բան չի մնա, տ-
մուանացել եմ:

ՌԻՄԱ. Ամեն մի...

Ներս ե մտնում Արմենը:

ԱՐՄԵՆ. Ներեցեք (Քրիստափորին) Քրիստափոր իվա-
նիչ, փորձեք զարմանալի կերպով հետաքրքրա-
կան բնույթ եմ ստանում:

Քրիստափորը վազում ե քուրս Արմենի
հետևից:

ՌԻՄԱ. Ո՛, ի՞նչ հետաքրքրական ե:

ԱԼՎԱՆ. Ի՞նչը:

ՌԻՄԱ. (Չուզեմալով պատասխանել) Ալվան, ասում ես
ամուսնացել ես:

ԱԼՎԱՆ. Այո:

ՌԻՄԱ. Ամեն մի ամուսնացած աղջիկ կորցնում ե
իբ աղջիկությունը:

ԱԼՎԱՆ. Իհարկե, աղջիկությունը վոր մնա, ել ի՞նչ
ամուսնություն: Դա վոչինչ, յեթե ուրիշ բա-
նիք չպատահեն:

ՌԻՄԱ. (Ապշած) Որքանեք ի՞նչ:

ԱԼՎԱՆ. Որքանեք, եհ միշտ մի Սմբատի ձեռքը չընկ-
նես՝ չես իմանա:

ՌԻՄԱ. Սմբատն ով ե:

ԱԼՎԱՆ. Իմ ամուսինը:

ՌԻՄԱ. Այդպես սարսափելի՞ր յե:

ԱԼՎԱՆ. Ո՛ր, զարհուրելի:

Տիրում ե լուսթյուն:

ԱԼՎԱՆ. Աղջիկու՞թյուն... Ռիմա՛, ինչքան խելոք ես, վոր մինչև հիմա չես ամուսնացել, աղջիկու՞թյան պես լավ բան չկա, որակա՛ն տասը սիրա կմտնես, տասը սրտից ել դուրս կթռչես: Լավ ասաց Քրիստափոր Իվանիչը:

ՌԻՄԱ. Յերեխա ունե՞ս:

ԱԼՎԱՆ. Այո՛, տարին նոր, յերեխան նոր, արդեն չորրորդն ունեմ:

ՌԻՄԱ. Ուրեմն...

ԱԼՎԱՆ. Ուրեմն չորս տարի յե ամուսնացել եմ, այսինքն՝ հինգ տարի:

ՌԻՄԱ. Չգիտեմ ձվ ե զարհուրելի՞ն, Ալվան, դու թե... ինչ եր անունը:

ԱԼՎԱՆ. Սմբատ:

ՌԻՄԱ. Այո՛, Սմբատը:

ԱԼՎԱՆ. Չարհուրելի՞ն բնութայունն ե, վո՛չ չես, վո՛չ Սմբատը:

ՌԻՄԱ. Բնութայունը, իսկ կամքը:

ԱԼՎԱՆ. (Բառեմսորեն ծիծաղելով) Ռիմա՛, դու աղջիկ ես:

ՌԻՄԱ. Բոլորն ել այդպես են ասում:

ԱԼՎԱՆ. Բոլորն ել ճիշտ են ասում, Ռիմա՛, ինձ այլեւս վո՛չ վոք չի ասելու, թե դու աղջիկ ես, թե՛ ոավ նա ինչպես մի անգամ յերևացող թռչունը:

ՌԻՄԱ. (Ցեկաբ ցրան ցայելուց հետո) Ռիմա՛, ասա՛, խնդրեմ, յերբեիցե սիրե՞լ ես, կամ՝ ավելի ճիշտը՝ յերբեիցե քեզ սիրե՞լ ես:

ՌԻՄԱ. Սիրե՞լ... կարծես... բայց ինչու այդպես հարցրիր — քեզ սիրե՞լ ես:

ԱԼՎԱՆ. Այո՛, այդպես պետք ե հարցնել, կանալք իրավունք չունեն սիրելու, նրանց սիրում ես: Մենք ի՞նչ ընտրություն կարող ենք անել: Վո՛չ մի: Մենք ինքներս չենք կարող ընտրել, մենք միայն ընտրություն ենք կատարում մեզ սիրողներին միջև: Պատահե՞լ ե, վոր մի աղջիկ հետապնդի մի տղամարդու, բունի նրան ու ասի՝ քեզ սիրում եմ: Յեղել են անողներ, բայց նրանք կոչվել են փողոցային աղջիկներ: Մենք միայն կարող ենք ընտրություն կատարել մեզ սիրողների միջև: Մենք հասել ենք միայն այդքան ազատության:

ՌԻՄԱ. Չարմանալի բաներ ես ասում:

ԱԼՎԱՆ. Յերեի չես հավատում ինձ: Ասա՛, խնդրեմ, յեթե դու հավանես մի տղամարդու և սիրես, կասես նրան: Վո՛չ: Կսպասես, կսպասես, մինչև ինքը սիրի, գուհիկ ասած՝ մինչև նրա քեֆը զա և հայտնի քեզ, նրբորեն ասած՝ սիրտը բաց անի քո առաջ:

ՌԻՄԱ. Ասենք՝ դա ճիշտ ե:

ԱԼՎԱՆ. Այո, ճիշտ ե:

ՌԻՄԱ. (Ընդոս) Յես այդպես չեմ անելու: Յես ինքս եմ ասելու:

ԱԼՎԱՆ. Չես ասի:

ՌԻՄԱ. Կասեմ:

ԱԼՎԱՆ. Ձեռն առի:

ՌԻՄԱ. Կասեմ:

ԱԼՎԱՆ. Կա մի ուրիշ բան: Ասենք՝ ասելն ասեցիր,
այն ժամանակ տղամարդը քեզ չի սիրի:

ՌԻՄԱ. Ինչո՞ւ:

ԱԼՎԱՆ. Ա՛խ, յեթե գիտենայի թե ինչո՞ւ: Միայն
գիտեմ, վոր այդպես են այդ սրիկաները:

ՌԻՄԱ. Սրիկաները...

ԱԼՎԱՆ. Ասած ինձ, Ռիմա, ի՞նչ էլիր սովորում Մոս-
կվայում:

ՌԻՄԱ. Յես զարմանալի մասնագիտություն ընտրե-
ցի:

ԱԼՎԱՆ. Ի՞նչ:

ՌԻՄԱ. Բաց եմ անում կույրերի աչքերը:

ԱԼՎԱՆ. Կույրերի աչքերը: Դա արդեն մասնագիտու-
թյուն չէ, դա հրաշագործություն է:

ՌԻՄԱ. Բաց եմ անում հոգու աչքերը:

ԱԼՎԱՆ. Այսինքն:

ՌԻՄԱ. Կարդալ եմ սովորեցնում նրանց:

ԱԼՎԱՆ. Իսկ այստեղ ի՞նչ ես անելու:

ՌԻՄԱ. Միթե՞ Հայաստանում կույրեր չկան:

ԱԼՎԱՆ. Կույրեր: Բազմաթիվ են կույրերը, սիրելիք:

ՌԻՄԱ. (Գմծիծաղ) Ինչպե՞ս ե քո Մամբաը, կո՞ւյր ե,
թե...

ԱԼՎԱՆ. Ա՛խ, յերանի նրան կարողանայիր կուրաց-
նել և ամեն բան չտեսներ:

Յերկուսը միասին ծիծաղում են: Մտնում է Աննան:

ԱՆՆԱ. Յես ել ասում եմ՝ ինչո՞ւ Ռիման այսքան
յերկար ժամանակ մնաց այստեղ: Ավանն ե յե-
կել: Ի՞նչպես դուք քո ընկերուհուն:

ԱԼՎԱՆ. Ջարմանալի լավ, Աննա Դավիդովնա, վո-
չինչ չի կորցրել իր աղջիկությունից:

ԱՆՆԱ. Շատ բնական է:

ՌԻՄԱ. (Ալվանին) Ուրեմն դու ինձ խորհուրդ չես
տալիս ամուսնանալու:

ԱԼՎԱՆ. Յես քեզ վո՛չ մի խորհուրդ չավի կարծեմ:

ԱՆՆԱ. (Մտնո՞ւ ելե՞ցեղով) Աղջիկը պետք է ամուսնանա:
Մտնում է Քրիստափորը:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիմա, ա՛հ, զբաղված ես:

Գնում է դուրս:

ՌԻՄԱ. Քրիստափոր իվանիչ... յես զավիս եմ:

Գնում է Քրիստափորի յետևից:

Աննան յեկ Ալվանը իրար են նայում:

ԱՆՆԱ. Սա ել տարվից այդ աղոթով:

ԱԼՎԱՆ. Ի՞նչ լավ է, միշտ աղջիկ մնալ և միշտ
սպասել, թե ինչ ե պատահելու: Ի՞նչ խելոք
է Ռիման, չամուսնացավ, թուշկոտում ե ու վաղ-
վզում, չի իմանում թե ի՞նչ կա աշխարհում:

ԱՆՆԱ. Մինչե՛ս յե՛րբ:

ԱԼՎԱՆ. Մինչե՛ս... չգիտեմ, Աննա Դավիդովնա, մինչե՛ս
այնքան ժամանակ, վոր աղետը չպատահի:

ԱՆՆԱ. Աղէտ:

ԱԼՎԱՆ. Այո՛ ամուսնությունն ավարիտ ե, հան-
կարծ ե պատահում և անպայման մի տեղ կը-
ջարդի:

ՎԱՐՈՅՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԱԹԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Տեսարանը նույնը:

Մտնում ե պարտեկավոր մի ժարգ՝ գա-
լիփե հագած:

ՄԱՐԳՈ. Համեցեք, նստեցեք, այս բոպեյիս հայա-
նեմ Գրիստափոր Իվանիչին:

ՊՈՐՏՅ. Վերտեղ ե նա:

ՄԱՐԳՈ. Աշխատանոցումն ե, փորձեր են անում:

ՊՈՐՏՅ. Թերևս... լես... խանգարում եմ նրան:

ՄԱՐԳՈ. Իհարկե, խանգարում եք:

ՊՈՐՏՅ. Ուրեմն կարիք չկա, յես վաղը կանցնեմ:

ՄԱՐԳՈ. Միենույն ե, խանգարեք կամ վոչ՝ պետք ե
հայտնեմ իրեն, այդպես ե պատվիրել:

ՊՈՐՏՅ. Ձե, չե, չե, յես վաղը (սկսում ե զնալ):

ՄԱՐԳՈ. Վաղն ել կխանգարեք, միենույն ե, թույլ
տվեք հայտնեմ նրան:

ՊՈՐՏՅ. (Ապագած յես ե դառնում) Լավ, հայտնեցեք:

Մարգան գնում ե դեպի աշխատանոց: Պարտեկավորը
նստում ե պարտեկը սեղանի վրա, սի պապիրոս ե վա-
ռում յեվ յերթեկեկում ե: Մտնում ե Գրիստափորը:

ԲՐԻՍՏԱՓ. Այդպես ել կարծում ելի:

ՊՈՐՏՅ. (Ընդառաջելով) Գրիստափոր Իվանիչ, արդեն
վերադարձել եմ:

ԲՐԻՍՏԱՓ. Ի՞նչպես են գործերը:

ՊՈՐՏՅ. Վատ, շատ վատ:

ԲՐԻՍՏԱՓ. Ինչո՞ւ:

ՊՈՐՏՅ. Կեր չկա, անասունները կոտորվում են:

ԲՐԻՍՏԱՓ. Խոշոր պրորբում ե:

ՊՈՐՏՅ. Իսկ ի՞նչպես են ձեր գործերը:

ԲՐԻՍՏԱՓ. Փորձերն առաջ են գնում:

ՊՈՐՏՅ. Հաջո՞ղ:

ԲՐԻՍՏԱՓ. Յերբեմն կարծում ենք, վոր հասնում
ենք, բայց պարզվում ե ընդհակառակը — հեռա-
ցել ենք:

ՊՈՐՏՅ. (Մոռալվելով) Սատանան տանի, մենք կորած
ենք: Գրիստափոր Իվանիչ, մենք մեծ հույս ենք
դրել ձեզ վրա:

ԲՐԻՍՏԱՓ. Հի՛շո: Ուրեմն դուք կարծում եք, այնքան
շուտ կլվինի աչդ գյուտը, վոր ամբողջ կերի
պրորբումը կլուծվի:

ՊՈՐՏՅ. Այո, այդպես ենք կարծում:

ԲՐԻՍՏԱՓ. Դուք առայժմ պետք ե մտածեք խոտ հա-
վաքելու մասին. ուրիշ վոչինչ:

ՊՈՐՏՅ. (Միամիտ գայլույթով) Բա ո՞ւր մնացին մեր
տեմպերը:

ԲՐԻՍՏԱՓ. Սա գիտուլթյուն ե, սիրելիս: Տեմպը վո-
չինչ չի ոգնի:

ՊՈՐՏՅ. Ի՞նչպես թե տեմպը չի ոգնի: Ասենք՝ մի

գլուտի համար հարկավոր ե հազար փորձ, տա-
սըն որը մի անգամ փորձ կատարելն ուրիշ ե,
որական տասը փորձ կատարելը՝ ուրիշ:

ՔՐԻՍՏՍՖ. Իսկ յեթե տասը հազար փորձ ե հարկա-
վոր:

ՊՈՐՏՖ. Իսկ քանի փորձ ե հարկավոր:

ՔՐԻՍՏՍՖ. Վնչ վոք չի կարող ասել:

ՊՈՐՏՖ. (Հուսահատ տնով) Իսկ յես կարծում եյի, վոք
շուտով կերի խնդիրը գիտականորեն կլուծվի:

ՔՐԻՍՏՍՖ. Ուրեմն միամիտ մարդ ես:

ՊՈՐՏՖ. Յես անասնապահական սեկտորի վարիչս մի-
ամիտ:

ՔՐԻՍՏՍՖ. (Մտեցնալով յեվ ձեռքը դնելով նրա ուսին)
Պիտի հավատաս, ուրիշ վոչինչ:

ՊՈՐՏՖ. Մինչև յերբ:

ՔՐԻՍՏՍՖ. Մինչև հաղթահարենք:

Մտնում ե ԱՆՆԱՆ:

ՊՈՐՏՖ. Բանք ձեզ, Աննա Դավիդովնա:

ԱՆՆԱ. Յես լսել եյի, վոր քաղաքում չեք, բարձ
եք յեկել:

ՊՈՐՏՖ. Այ՛ս շրջանումն եյի: Շատ մեծ հույսերով
վերադարձա, բայց Քրիստափոր Իվանիչը ջախ-
ջախիչ հարված ե հասցնում իմ հույսերին:

ԱՆՆԱ. Ինչի՞ մասին ե խոսքը:

ՊՈՐՏՖ. Ազդեթի պրորեկտի մասին: Անաստենները կո-
տորվում են, կեր չկա, իսկ Քրիստափոր Իվա-
նիչի գործերը, ինչպես յերևում ե, մոլթ են:
Ներեցեք, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏՍՖ. Այո՛, մոլթ են: Այսպես ասած՝ պրորեկտի
կես գիշերում ենք:

ԱՆՆԱ. Յես վնչ մի առաւոտի շող չեմ տեսնում:

ՔՐԻՍՏՍՖ. (Չապված զայրույթով) Աննա:

ԱՆՆԱ. Իմ կարծիքն ե:

ՔՐԻՍՏՍՖ. Խնդրում եմ քո կարծիքը պահել խոհա-
նոցի ե նորաձևության համար:

ԱՆՆԱ. Անաստենների մասին ել կարելի ե կարծիք
ունենալ:

ՔՐԻՍՏՍՖ. Այստեղ...

ՊՈՐՏՖ. (Ընդմիջելով) Քրիստափո՛ր Իվանիչ, յես կա-
տուկ եմ անում: Վերջապես իմ պատճառով...
նո՛ւ, յես զնացի: Քրիստափոր Իվանիչ (ձեռքը
բռնելով) վոչ մի հուսահատութիւն, մենք հա-
վատում ենք, յես կարծում եյի, վոր տեմպերն
արագացնելով՝ ավելի շուտ կլինի, մեր կարիքն
հարվածալին ե, բայց ի՞նչ արած (սեղմելով ԱՆ-
նայի ձեռքը) ցտեսութիւն:

Պրոտֆիլավորի գնաւոց հետո՝ Քրիստափորը յերկար նա-
յում ե կնոյր, մի պապի ոս ե վառում յեվ սկսում
ե գնալ դեպի աշխատանքը:

ԱՆՆԱ. Քրիստափո՛ր:

ՔՐԻՍՏՍՖ. (Կանգ առնելով) Ի՞նչ կա:

ԱՆՆԱ. Մինչև յերբ պիտի շարունակվի այս:

ՔՐԻՍՏՍՖ. Ի՞նչը:

ԱՆՆԱ. Այս անախորժ փոխհարաբերութիւնը:

ՔՐԻՍՏՍՖ. (Բոլորովին յիս դառնալով) Այո՛, յես ել եմ
ուզում իմանալ, մինչև յերբ:

ԱՆՆԱ. Վերջապես...

ՔՐԻՍՏՍՖ. (Ընդմիջելով) Ծաղրում ես դու ինձ, խո-

ցում ես միշտ, յեթե իմ զխտական աշխատանքն
անարժեք ե քեզ համար՝ ուրեմն յես վոչ՝ մի
արժեք չեմ ներկայացնում, ել ինչն ե կապում
քեզ ինձ, սիրելի սովորութիւնն ե, ինչ ե:

ԱՆՆԱ. Վոչ, սովորութիւնն չե:

ՔՐԻՍՏԱՓ. Ապա ինչ ե:

ԱՆՆԱ. Սիրելին արժանապատուութիւնն ե:

ՔՐԻՍՏԱՓ. Ուրեմն:

ԱՆՆԱ. Վերջ պիտի լինի այս փոխհարաբերութեանը:

ՔՐԻՍՏԱՓ. Այդպիսի վճռական հարց դրիր դու քո նախ-
կին ամուսնու առաջ, դնում ես ե իմ առաջ:

ԱՆՆԱ. Այո՛:

ՔՐԻՍՏԱՓ. Լա՛վ, վճռիր:

ԱՆՆԱ. (Յերկար նայելով Քրիստափորիմ՝ հանկարծ ըս-
կում ե արտասով):

Քրիստափորը սպասում ե յերկար, գլուխը կախում ե,
սկսում ե խղճահարկել մտեցնում ե Աննային բռնում
ե գլուխը:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, թունավորում ես դու կլանքը, թե
քոնը, թե իմը: Վերջապես մենք իրար հասկա-
նում ելինք, ինչ պատահեց քեզ:

Աննան փաթարվում ե նրան յեղ շարունակում ե ար-
տասով:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, Աննա...

ԱՆՆԱ. Յես սխալ արի, յես այդպես չպիտի արտա-
հայտվելի:

ՔՐԻՍՏԱՓ. Նո՛ւ, մոռացիր, սրբիւր արցունքներդ: Լը-
սիր, Աննա, վոչինչ ինձ այնքան չի ջլախնաց-
նում, վորքան կնոջ արցունքը:

ԱՆՆԱ. (Սրբում ե արցունքներ) Իսկ վոչինչ այնքան
չի թեթևացնում վիշտը, վորքան արցունքը:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, մի խանգարիր ինձ, ըմբռնիր կա-
ցութիւնը, վոգևորվիր իմ զխտական աշխա-
տանքով, ուրիշ յեւք չկա, չկա ուրիշ յեւք, ա-
սում եմ: Սիրելի... սիրելին այդպես չի լինում:

ԱՆՆԱ. (Բռնելով Քրիստափորի բեռանը) Լա՛վ, լա՛վ...

ՔՐԻՍՏԱՓ. Թույլ տուր, Աննա, կան մի քանի բաներ,
վոր վերջնականապես պետք ե բացատրված լի-
նեն: Յեթե մի որ...

Ներս ե վազում պատշգամբից Ռիման՝ ուռաւ ազդասկ-
ներով:

ՌԻՄԱ. Վերջացավ, ամեն ինչ վերջացավ, շենքի խն-
դիրն ել լուծվեց:

Քրիստափորը դիտում ե նրան ներքին ուրախությամբ,
բայց մայրը գլխիկը, տխուր՝ ներքիլ ե նայում: Հան-
կարձ Ռիման նշմարում ե:

ՌԻՄԱ. Մամա, ինչ ե պատահել (լուրջաւն) յես կար-
ծում եյի այնպես ուրախ պետք ե լինեք...

ՔՐԻՍՏԱՓ. Ուրախ ենք, Ռիմա, շատ ուրախ ենք:

ՌԻՄԱ. Մամա...

ՔՐԻՍՏԱՓ. Աննա:

ԱՆՆԱ. Ուրախ եմ, աղջիկս (նզնում ե ժպտալ):

ՌԻՄԱ. Վոչ, ուրախ չես:

ՔՐԻՍՏԱՓ. (Բռնելով ձեռքը) Արի այստեղ պո՛լ
ինձ:

Նստում ե քաղկաթոնի:

ՌԻՄԱ. Լուստողկումը համաձայնեց, տալիս են ին-
յերեք սենյակ:

ՔՐԻՍՏԱՓ. Յերեք:

ՌԻՄԱ. Այո:

ՔՐԻՍՏԱՓ. Քիչ չէ:

ՌԻՄԱ. Վհչ, քաղաքում ընդամենը կա 30-40 կույր, բավական է:

ՔՐԻՍՏԱՓ. Ասա ինձ, Ռիմա, քեզ համար ի՞նչ հաճույք է զբաղվել կույրերի հետ:

ՌԻՄԱ. Բարձրագույն հաճույք, Քրիստափոր Իվանիչ, մենք բոլորս կույր կնք, յեթե կարդալ չենք իմանում. մեր աչքերը տեսնում են՝ միայն այն ժամանակ յերբ կարդում ենք: Յես սովորեցնում եմ կույրերին կարդալ, նրանք ըսկաում են հաղորդակից լինել աշխարհի հետ: Յեթե ամեն մի մարդ կարողանա չերջանկացնել մի ուրիշին, ազատել նրան տառապանքից, դա կլինի նրա խոշորագույն վարձատրությունը, իսկ չես այժմ հնարավորություն ունեմ յերջանկացնելու տասնյակ կույրեր, վորոնք թափառում են աշխարհի խավարում առանց վորեւե արեւի շողի:

ԱՆՆԱ. Առանց արեւի շողի...

ՔՐԻՍՏԱՓ. Դրքեր կան կույրերի համար, Ռիմա:

ՌԻՄԱ. Բազմաթիվ գրքեր, հրատարակված է Լենինի ընտիր յերկերի մի ամբողջ հատոր, հրատարակված է Տինչե անգամ Պուշկինը:

ՔՐԻՍՏԱՓ. Լենինը, Պոլկինը:

ՌԻՄԱ. Այո, և դեռևս Տոլստոյ, մինչև անգամ Նորագույն գրողներ, Ֆանտաստիկ վեպեր, գիտական գրքեր:

ՔՐԻՍՏԱՓ. Գիտական գրքեր:

ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչ, նրանցից շատերը չափազանց ընդունակ են: Հրատարակված են և յերաժշտական յերկեր:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիմա, ինչ դարձանալի աղջիկ ես դու, ինչքան ոգտակար ես անցկացրել քո ժամանակը, քեզ հվ թեկադրեց, վոր սովորես այդ մասնագիտությունը:

ՌԻՄԱ. Վհչ վոր, պատահաբար:

ՔՐԻՍՏԱՓ. Պատահականությունը մեծ դեր է խաղում կյանքում:

ՌԻՄԱ. Այժմ գնամ և պատրաստեմ ինվենտարի ցուցակը, այստեղ վոչինչ չկա, բոլորը պետք է ըստացվի Մոսկվայից (ուրախ վեք է ցոսկում յեվ մոսեմում մուք) Մամա, դու չես հետաքրքրվում վոչնչով:

ԱՆՆԱ. Լսում եյի, աղջիկս, չեքք է սկսվելու աշխատանքը:

ՌԻՄԱ. Արդեն սկսել եմ:

Գնում ե: Յերար լուքյուն:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, պետք է վոգեորել Ռիմային, պետք է ուրախանալ նրա աշխատանքով: Իսկապես ի՞նչ բարձրագույն հաճույք է՝ բաց անել թշվառ մարդկանց հոգու աչքերը:

Լուքյուն: Ծանրանում ե մքնորտը:

Յեվ ալելի լավ է բաց անել հոգու աչքերը, քան իսկական աչքերը...

Լուքյուն: Քրիստափորը մայում է Աճայիմ, Աճամ գնալով մոսկվում ե:

Ալելի լավ է աչքեր չունենալ և չտեսնել, քան ունենալ և չտեսնել:

Լուրջուն: Գրիտափորը նայում է սեղանին, աշխատա-
նոցի ալիտակ խալաքը իրար վրա յե բերում:

Յուրտ ե այստեղ, մըսում եմ: Խոնամ, սաճուր:

ԱՆՆԱ. Մըսում ես այս յեղանակին:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, մըսում ե հոգիս, ձմեռ ե:

ԱՆՆԱ. (Վեր ե կենում յեվ գլխիկոս հեռանում:)

ՔՐԻՍՏԱՓ. Ո՛ւր գնաց Ռիման (բարձր) Ռիման, Ռիման,
արի, քո բացակայութեանը փչում են ցուրտ
հողմերը: (Ավելի վագելորված), արի, արի, արի:
Մտնում ե Աննան:

ԱՆՆԱ. Ինձ կանչեցիր:

ՔՐԻՍՏԱՓ. (Յերկար յեվ ապեհաւ նայում ե յեվ ըս-
կում ե քայլել դեպի աշխատանոցը):

Աննան գլուխը կախում ե:

Վ.Ա.Ր.Ա.Գ.ՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Պատշգամբ:

Աննան հասած ե աքոռին. արմուկը դրած պատշգամբի
յերկաքաճողին, նայում ե հեռուն մտաւոգ յեվ քախ-
ձստ: Ներսը, սեյսիւն, նրազ ե վառվում:

ՌԻՄԱ. (Մտնում ե ձախ կողմից) Մաման (ձեռները դը-
նում ե նրա ուսերին յեսեվից):

ԱՆՆԱ. (Ընդոտս վեր ցատկելով) — Ո՛, ինչպե՞ս վախեցա:

ՌԻՄԱ. Ինչո՞ւ, մաման, չես եմ:

ԱՆՆԱ. Ուշքս վրաս չեր, չճանաչեցի ձայնդ:

ՌԻՄԱ. Կես գիշեր ե, մաման, ինչո՞ւ չես գնում քնե-
լու:

ԱՆՆԱ. Սպասում եմ Գրիտափորին:

ՌԻՄԱ. Վերադա՛ր ե նա:

ԱՆՆԱ. Աշխատանոցում:

ՌԻՄԱ. Յերեի դրադված ե:

ԱՆՆԱ. Իհարկե զրադված ե:

ՌԻՄԱ. Դու գնա քնիր, մաման, աշխատանքը վերջաց-
նելուց հետո՝ նա կգա:

ԱՆՆԱ. Առաջին անգամ չե, Ռիմա, գիշերներ ե լուսացնում:

ՌԻՄԱ. Բողոքում ես այդ բանի դեմ:

ԱՆՆԱ. Այո:

ՌԻՄԱ. Մամա, ախ՛ր...

ԱՆՆԱ. Մինչև յերբ պիտի տես այս հարաբերությունը:

ՌԻՄԱ. Մինչև յերևի այդ փորձերի լրումը:

ԱՆՆԱ. Այդ փորձերը կվերջանան, նորերը կսկսվեն: Այդ փորձերին վերջ չկա:

Մտնում ե Մարգոն:

Ո՞վ ե:

ՄԱՐԳՈ. Յես եմ, տիկին:

ԱՆՆԱ. (Վոսի կանգնելով) Լույսերը հանգցրու, Մարգո, և գնա քնիր: Գնանք, Ռիմա:

Գնում են Ռիման յեկ ննջան: Մարգոն մտնում ե սենյակը: Քիչ անց սենյակի լույսերը հանգչում են, Մարգոն զուրս ե գալիս դեպի պաշտոնը: Վերամտնում ե Ռիման:

ՌԻՄԱ. Մարգո, գնում ես քնելու:

ՄԱՐԳՈ. Այո:

ՌԻՄԱ. Հոգնած ես:

ՄԱՐԳՈ. Այո:

ՌԻՄԱ. Չե՞ վոր այսօր քո հանգստի որն եր:

ՄԱՐԳՈ. Հենց հանգստի որն եմ հոգնում: Իբր թե գնում եմ և զբոսնում:

ՌԻՄԱ. Ո՞ւմ հետ ես զբոսնում:

ՄԱՐԳՈ. Ե՛հ, մի քանի տղաներ կան:

ՌԻՄԱ. Տղաներ:

ՄԱՐԳՈ. Այո:

ՌԻՄԱ. Իսկ ի՞նչպես եք զբոսնում:

ՄԱՐԳՈ. Ամեն անգամ միևնույնը:

ՌԻՄԱ. Ի՞նչպես:

ՄԱՐԳՈ. Անվերջ բացատրվում են:

ՌԻՄԱ. Իսկ դե՞:

ՄԱՐԳՈ. Անվերջ մերժում եմ:

ՌԻՄԱ. Իսկ յեթե չմերժես:

ՄԱՐԳՈ. Յեթե չմերժեմ՝ ամեն ինչ կվերջանա:

ՌԻՄԱ. Ի՞նչպես:

ՄԱՐԳՈ. Ել վո՛չ վոր առաջարկություն չի անի: Իսկ ամենաղվարձալիս առաջարկությունն է: Արդեն մի ժամ առաջ զգում ես, վոր պետք ե անի, հիմար-հիմար խոսում ե, ձեռք բռնում ե, բաց ե թողնում, հետո հանկարծ լուծում ե, չի խոսում բայց թու՛քը կուլ ե տալիս, աչքերն ապուշանում են: Մարգո, յես... քեզ... չի կարողանում վո՛չինչ ասել, հասկանում ես, թե ինչ ե ուզում ասել, բայց այն կողմերը չես լինում: Վերջապես ասում ե...

ՌԻՄԱ. Հետո, հետո...

ՄԱՐԳՈ. Հետո միևնույնը, թե՛ յես այդ մասին չեմ մտածել, սպասիր:

ՌԻՄԱ. Հետո, հետո:

ՄԱՐԳՈ. Հետո ել ի՞նչ, հազար ու մի բաներ են՝ պատահում, և մի որ ել տեսնում ես, քեզ ել չի բարեկամ այն մարդը, վոր ասում եր, թե առանց քեզ չեմ կարող ապրել:

ՌԻՄԱ. Ա՛խ, Մարգո, ի՞նչ զարմանալի տղիկ ես:

ՄԱՐԳՈ. Ե՛հ, բարի գիշեր:

ՌԻՄԱ. Բարբի գիշեր (յեթնվից) Մի բոպե (Մարգոն
կանգ է առնում): Մտիւր աշխատանոց և անս
Քրիստափոր Իվանիչին, վոր մի բոպե զա աշխ-
տեղ:

ՄԱՐԳՈ. Լավ, կտեսմ, թեև աշտոր իմ հանգստի ո-
րըն ե:

Դուք ե: Ռիման նստում է աքոսին յեվ նայում հեռուն:

ՔՐԻՍՏԱՓ. (Աշխատանոցի սարագով մտնում է աջից)
Ռիմա:

ՌԻՄԱ. (Վազելով ընդառաջ) Յերկար ես մնալու աշ-
խատանոցում:

ՔՐԻՍՏԱՓ. Յերեկ մինչև առավոտ:

ՌԻՄԱ. Լավ:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչ պիտի ասեյիր, Ռիմա:

ՌԻՄԱ. Վոչինչ, ուզում եյի միայն այդ հարցնել: Մա-
ման եր ուզում իմանալ: Բարբի գիշեր:

ՔՐԻՍՏԱՓ. (Ձեռք բռնելով յեվ հեծելով նրան) Ռի-
մա:

ՌԻՄԱ. (Յեռ դառնալով) Բարբի գիշեր...

Դնում է: Քրիստափորը կանգնում է յեվ նայում է նրա
յետովից:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Քիմիական փոքրիկ լաբորատորիա Քրիստափորի բնա-
կարանում:

Վարագույրը բացվելիս Քրիստափորը, Արմենը յեվ Ջա-
րուհին անակոթյամբ դիտում են փիմական մի փորձ:

ԱՐՄԵՆ. Յեթե այս փորձն ել անհաջող դուրս գա...

ՔՐԻՍՏԱՓ. (Առանց ուշադրությունը հեռացնելու փոր-
ձից) Ասենք՝ անհաջող դուրս չեկավ:

ԱՐՄԵՆ. Չգիտեմ ի՞նչ պիտի անել:

ՔՐԻՍՏԱՓ. Իսկ յես գիտեմ:

ԱՐՄԵՆ. Ի՞նչ:

ՔՐԻՍՏԱՓ. Նորից պիտի փորձել (զուլսր բաժնացնե-
լով) Արմեն, պիտի փորձել:

ՋԱՐՈՒՀԻ. Արդեն, արդեն:

Նորից բոլորը կանգնում են փորձի վրա:

ԱՐՄԵՆ. Արդեն անհաջող:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, արդեն անհաջող:

ԱՐՄԵՆ. Չորս վազմի...

Լուսքյուն:

ՔՐԻՍՏԱՓ. Չարմանալի յե, ինչքան անհաջող ե անցնում

կլուսացնեմ կյանքի յուրաքանչյուր գիշերը:

Փորձը՝ այնքան համառությունս կարծրանում ե:

ԱՐՄԵՆ. Ի՞նչ պոռտ համառությունից:

ՔՐԻՍՏԱՓ. Գիտությունը համառությունն է:

ԱՐՄԵՆ. (Քմծիծաղով) Իմ հայրը, մայրս եր պատմում,
մի բանի համար քսուսսուն տարի վոչ ասաց,
բայց գիտությունն դուրս չեկավ:

ՔՐԻՍՏԱՓ. Արմեն, ըո հայրը, ըստ յերևույթին...

ԱՐՄԵՆ. (Ընդմիջելով) Վոչ թե ըստ յերևույթին, այլև
ըստ ելության... Քրիստափոր Իվանիչ:

ՋԱՐՈՒՀԻ. Լուսանում է:

ՔՐԻՍՏԱՓ. (Նայելով լուսամուտին) Այո, լուսանում է...

ԱՐՄԵՆ. Առավոտ: Ո՞վ է իմանում, ի՞նչ քաղցր գի-
շեր անցկացավ բյուրավոր մարդկանց համար:

ՔՐԻՍՏԱՓ. (Չափազանց լուրջ) Արմեն, հուսահատված
ես յերևում:

ԱՐՄԵՆ. Վոչ, Քրիստափոր Իվանիչ, յես կհամառեմ
մինչև մահ:

ՔՐԻՍՏԱՓ. (Ժպտալով) Մինչև մահ համառելու կարիք
չկա, մինչև առավոտ բավական է:

Արմենը յեվ Զարուհին բարեմտքին ծիծաղում են:

ԱՐՄԵՆ. (Ծիծաղը հեզգհեհե փոխվում է հորանջումի)
Գնանք, քնենք, յեթե կարելի յե քնել:

ՋԱՐՈՒՀԻ. Ինչո՞ւ Այնպես կարելի յե քնել:

ԱՐՄԵՆ. Ե՛հ, շատ խնդիրներ կան, վորոնց մասին
պետք է մտածել:

ՋԱՐՈՒՀԻ (Հանելով ախտաանոցի սպիտակ հագուստը)
Որինակ:

ԱՐՄԵՆ. Որինակ:

ՋԱՐՈՒՀԻ. Այո:

ԱՐՄԵՆ. Սեր:

ՋԱՐՂՈՒՀԻ. (Փոքրիկ ծիծաղով) Նո՞ր է:

ԱՐՄԵՆ. Վոչ:

ՋԱՐՈՒՀԻ. Ապա:

ԱՐՄԵՆ. Չկա:

ՔՐԻՍՏ. (Առանց ընդհատելու զբաղումը) Լավ է, վոր
հին չե, իսկ «չկան» ամենահուսալիցն է, «չկան»
ե, վոր կլինի:

ՋԱՐՈՒՀԻ. Իսկ յեթե հի՛ն է:

ՔՐԻՍՏԱՓ. Անհույս է:

ԱՐՄԵՆ. Իսկ յեթե նո՞ր է:

ՔՐԻՍՏԱՓ. (Խորը) Ահավոր է:

Լուրջյուն:

ԱՐՄԵՆ. (Հագուստը հանելով լեվ դնելով կեպիան Գրիս-
տափոր Իվանիչ, մենք գնում ենք:

ՔՐԻՍՏԱՓ. Տ՛ը...

ԱՐՄԵՆ. Իսկ դժե՞ք:

ՔՐԻՍՏԱՓ. Յես մի քիչ պետք է զբաղվեմ:

ՋԱՐՈՒՀԻ. Չբաղվե՞ս:

ՔՐԻՍՏԱՓ. Մի փորձ ևս պետք է անեմ (զբաղվում է):

ՋԱՐՈՒՀԻ. Բարի գիշեր...

ԱՐՄԵՆ. Բարի գիշեր (Նայելով լուսամուտին) Բարի
լույս, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Բարի լույս:

ՋԱՐՈՒՀԻ. Նո՛ւ, լաղնու:

Արմենը յեվ Զարուհին դուրս են գնում:

ՔՐԻՍՏԱՓ. Սերը յեթե նոր է, ահավոր է (Յխուր նա-
յում է, ապա ժպտում յեվ շարունակում է զբաղ-
մունքը), նորը՝ ավելի խորը... Վորքան խորը,

այնքան ահալորը... վորքան նոր ե գարունը,
այնքան խոլ ե արյունը: Կյանքը կախարդական
և դաժան մի յերազ ե... (վերջին խառնուրդներն
անելով՝ նստում ե արողին յեվ սկսում ե անձկու-
թյամբ դիտել: Վառում ե մի պապիրոս յեվ յեփոս
դիտելուց հետո) Նորից փոթորիկ ե ալեկոծ ծով...
Բայց արդե՞ք նորից կլայնանան սպիտակ առա-
գաստները և կհասնեն լուսապայծառ և սպիտակ
ափը... Կարճե՞ղ ե արդյոք պատահել, վոր չփա-
րատվի ծովի մոռյուլթյունը: Այո, կարող ե: Կյան-
քը կսուզվի ծովի հատակը և կլինի հավիտենա-
կան խավար, մինչև անգամ յեթե հազարա-
վոր արևներ ել փռվեն ծովի մակերեսի վրա
(հուսահատ յեվ թխուր՝ կուրծքը հեցում ե սեղանին
յեվ նայում ե ծխելով):

Ներս ե մտնում Ռիման, գիշերային գզետով, մազերը
թափված: Քրիստափորը չի տեսնում. շարունակում ե
իբ մենախոսությունը:

ՔՐԻՍՏԱՖ. Կլինի՞ արդյոք մի լապտեր, վոր լուսավո-
րի իմ ճանապարհը սրանից հետո: Այժմ մուլթ
ե ճանապարհը, մինչև անգամ դեպի արևը:

ՌԻՄԱ. Առավոտ ե, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՖ. (Վեր ցատկելով ապշահար) Առավոտ:

ՌԻՄԱ. Այո, առավոտ:

ՔՐԻՍՏԱՖ. Առավոտը դու յես, Ռիման.

ՌԻՄԱ. Ամբողջ գիշերն աշխատել ես: Ինչքան հոգնած
կլինես:

ՔՐԻՍՏԱՖ. Յեթե գիտենամ, վոր ամեն մի հոգնած
գիշերից հետո դու պիտի ծագես իմ շեմքի վրա՝ յես

ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչ, շատ ես հոգնած:
ՔՐԻՍՏԱՖ. (Ինքնիրեն, առանց Ռիմային նայելու) Կյան-
քի անիվը դառնում ե յետ... Յետ են դառնում
իմ որերը: Յեվ այդ որերն ապրում եմ յես ա-
վելի սարսափով և ավելի հափշտակությամբ:
ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչ, ի՞նչպես են անցնում
փորձերը:

ՔՐԻՍՏԱՖ. Անհաջող:

ՌԻՄԱ. Ինչո՞ւ:

ՔՐԻՍՏԱՖ. Յեթե ինչուն իմանանք՝ անհաջող չեն
անցնի:

Լուրջուն:

ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչ, վճրտեղ ե սպիտակ
ափը:

ՔՐԻՍՏԱՖ. Սպիտակ ափը:

ՌԻՄԱ. Այո, այն սպիտակ ափը, վորի մասին խոսում
եյիր, յերբ յես ներս մտա:

ՔՐԻՍՏԱՖ. Սպիտակ ափը գտնվում ե կյանքի մոռյու
ծովերից դենը:

ՌԻՄԱ. Ի՞նչ կա այնտեղ:

ՔՐԻՍՏԱՖ. Այնտեղ կա իմ սիրտը... յեվ մի աղջիկ՝
դեռ նոր-նոր ծագկած:

ՌԻՄԱ. Քո սիրտը և մի աղջիկ...

ՔՐԻՍՏԱՖ. Մի սիրտ վերավոր և մի աղջիկ...

ՌԻՄԱ. (Ընդմիջելով) Այդ սիրտը ճանաչում ե աղ-
ջկան:

ՔՐԻՍՏԱՖ. Այո:

ՌԻՄԱ. Իսկ աղջիկը ճանաչում ե այդ սիրտը:

ՔՐԻՍՏՈՍՔ. Չգիտեմ:

ՌԻՄԱ. Անպայման ճանաչում ե, վորովհետեւ աղջիկն ինքը մի սիրտ ե, իսկ սրտերը ճանաչում են իրար:

ՔՐԻՍՏՈՍՔ. Իսկ դու տեսել ես այդ աղջկան:

ՌԻՄԱ. Չգիտեմ: Մի գուցե:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ռիմա...

Իբրից սի աղմուկ ե լսվում, կարծես մի առաքիա վայր ե ընկնում:

ՌԻՄԱ. Մամա (վազում ե դեպի լուսամուտը: Քրիստափորը՝ յեսեվից):

Յերկուսը միասին ահաբեկված նայում են դուրս, բայց կամաց-կամաց սկսում են ժպտալ, ժպիտը վերածվում ե ծիծաղի:

ՔՐԻՍՏՈՍՔ. Չարաճճի կատու...

ՌԻՄԱ. (Մոռալիկով) Թերեւս կատուն պատահական չեւր (վազում ե դուրս):

ՔՐԻՍՏՈՍՔ. (Մենակ, Ռիմայի յեսեվից) Մանուկ ե կի՛ն...

Այո, Թերեւս կատուն պատահական չեւր, Թերեւս խորամանկ կինը դիմել ե խորամանկ կառավար աջակցությանը: Կի՛ն, ինչքան զգլխիչ ես, յերբ վստատուում ես զարնան կանաչ ափերին:

Վերամտնում ե Ռիման:

ՔՐԻՍՏՈՍՔ. Աննան քնած ե:

ՌԻՄԱ. Այո:

ՔՐԻՍՏՈՍՔ. Չարմանալի ե:

ՌԻՄԱ. Ինչո՛ւ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Նա այսքան յերկար չեւր քնի:

ՌԻՄԱ. Դիշերը գրեթե չեւր քնել:

ՔՐԻՍՏՈՍՔ. Դիտե՛, վոր լեւս անկողին չեւ գնացել:

ՌԻՄԱ. Այո: Կես գիշերին սպասում եր պատշգամբում, ուղարկեցի ներս, բայց չընեց, յեկավ ինձ մոտ, ուղում եր աշխատանոց դալ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Հետո:

ՌԻՄԱ. Չթողի:

Լուսլում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ռիմա, ի՛նչ եր ասում:

ՌԻՄԱ. Վոչի՛նչ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ռիմա, մղիւր նրան աշխատանքի: Սար-առփելի բան ե ամբողջ ուրը տանը... Մարդ կարող ե գովել:

ՌԻՄԱ. (Վալրկեանկան մոռալիկով) Այո, ամբողջ ուրը մենակ: Այո, կարելի ե գովել: Քրիստափոր Ի-վանիչ, չկամ արդէս մի վորեւե յելը:

ՔՐԻՍՏՈՍՔ. Կա:

ՌԻՄԱ. Ի՛նչ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Հասարակական աշխատանք: Արդեն տարիքն առած կին ե, Ռիմա, մենք մեզի ենք, դուրսը չեւ ասում:

ՌԻՄԱ. Քանի՞ տարեկան ե:

ՔՐԻՍՏՈՍՔ. Քառասուն ե վեց, առավել յերկու կամ յերեք:

ՌԻՄԱ. Ինչո՛ւ առավել յերկու կամ յերեք:

ՔՐԻՍՏՈՍՔ. (Բռնելով Ռիմայի ձեռքը յեւ բարեմտորեն ժրպտալով) Բոլոր կանայք, առանց բացառության, Ռիմա, յերեսունից հետո մի տարի պակասում են, յերեսունհինգից հետո՝ յերկու, իսկ քառասունից հետո՝ յերեք, հիսունից հետո արդեն հինգ, վեց, վաթսուներից հետո մեռնող կանայք կյանքի ցու-

ցաղում անպայման արձանագրվում են տասը
տարի ավելի յերեսասարդ՝ բան իրենց իսկա-
կան տարիքը:

ՌԻՄԱ. Ուրեմն յես...

ՔՐԻՍՏԱՓ. Դու դեռ այն տարիքումն ես, վեր պետք
է մեծացնես քեզ:

ՌԻՄԱ. Կգժ ոյն տարիքը, վոր սկսեմ պահպանել:
ՔՐԻՍՏԱՓ. (Հաստ) Այո, կգա:

ՌԻՄԱ. (Մռալ յեկ նայիլ) Ձեմ ուզում:

ՔՐԻՍՏԱՓ. Բայց ինչո՞ւ մտածել այդ մասին այժմ-
յանից:

ՌԻՄԱ. Ձմեռը գալուց առաջ են ձմեռվա պատրաս-
տություն տեսնում:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, տնտեսագետները: Դու հո տնտեսա-
գետ չէս: (Գրկում է նրան):

Դրսից լավում է նորիս մի ազմուկ:
Ռիմա նեղանում է յեկ ունի՞դում:

ՌԻՄԱ. Ամեն անգամ կատու չի լինի...

Վագում է դուրս:

ՔՐԻՍՏԱՓ. (Մեկակ) Միշտ կլինի մի կատու, մի գա-
ղաղած և պառաված կատու, վոր կճանգով սիրտը:

Մտնում է Մարգոն:

Թող գա տոավոտը:

ՄԱՐԳՈ. Արդեն չեկել է առավոտը, Քրիստափոր ի-
վանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞մ առավոտը, Մարգո:

ՄԱՐԳՈ. Առավոտը բոլորի համար է:

ՔՐԻՍՏԱՓ. Ո՞վ է զարթնել տանը:

ՄԱՐԳՈ. Միայն Ռիման:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիման:

ՄԱՐԳՈ. Այո, պատշաճբումն եր:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՞նչ եր անում:

ՄԱՐԳՈ. Վորքան կարողացա գուշակել՝ չերագում եր:

ՔՐԻՍՏԱՓ. Յերագում... (լուրջուն) Իսկ ի՞նչ բան է
յերագը, Մարգո, կարո՞ղ ես ասել:

ՄԱՐԳՈ. Յերմլը... ինչպե՞ս ասեմ... չունեցած բաները
ցանկանալն է:

ՔՐԻՍՏԱՓ. Որինակ:

ՄԱՐԳՈ. Որինակներ շատ կան:

ՔՐԻՍՏԱՓ. Ասա մեկը:

ՄԱՐԳՈ. Մեկը... յերբ որինակները շատ են, մարդ
չի կարող գտնել:

ՔՐԻՍՏԱՓ. Մարգո, ճիշտ ասա, դու ի՞նչ ես յերագում:

ՄԱՐԳՈ. Յէս... յես չերագում եմ մի աղջիկ, վոր
ինձ աղախնություն անի, Քրիստափոր իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. (Միծաղելով) Սքանչելի յերագ է: (Միծա-
ղելով դուրս է գնում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա.Ռ.Ա.Ջ.Ի.Ն.ՊԱՏԿԵՐ

Դանիիմը:

Վարագույրը բացվեիս՝ Աննան նստած է արթուն յեղ
յերեկում է, վար սպասում է մեկիմ: Պատգամբից ուրախ
մտնում է Ռիման:

ԱՆՆԱ. Ռիման:

ՌԻՄԱ. Մաման: Յերկանը սպասեցիր ինձ:

ԱՆՆԱ. Այո, յերկար:

ՌԻՄԱ. Այսօր շատ ելի զբաղված, սենյակների նորո-
գումը վերջանում է, փոքրիկ, սիրուն զարդ:
Այնքան սիրուն ներկել են, բաց-կապտավուն...

ԱՆՆԱ. Բայց կույրերի համար ի՞նչ տարբերություն:

ՌԻՄԱ. Շատ մեծ տարբերություն կա, մաման: Որի-
նակ՝ յեթե մեկը գա և ասի, թե ի՞նչ սիրուն
ներկված են պատերը՝ կույրերը լավ կզգան, նը-
րանք մինչև անգամ կտեսնեն գույնը: Կույրը,
մամա, յերևութապես է կորցնում իր տեսողու-
թյունը, նրա մյուս զգայարանները վերցնում

են տեսողության բոլոր ֆունկցիաները, նրանք
լսողությամբ կարող են ասել, թե իրենց հետ
խոսողը գեղեցիկ մարդ է թե վոչ: Նրանք յեր-
բեք չեն սխալվում, նրանց ներքին աշխարհը
հարուստ աշխարհ է, մամա չեթե տեսող մար-
դու ներքին աշխարհը լինեիր այնքան հարուստ,
վորքան կույր մարդունը...

ԱՆՆԱ. (Ընդմիջելով) Յես քեզ մի բան պիտի հարց-
նեյի:

ՌԻՄԱ. (Թեքել սրճեղած) Հարցրո՛ւ:

ԱՆՆԱ. Մաածեցիր:

ՌԻՄԱ. (Վայրկենապես մոռալվում է) Վոչ:

ԱՆՆԱ. Ինչո՛ւ:

ՌԻՄԱ. Վորովհետև յես ամուսին չեմ փնտռում:

ԱՆՆԱ. (Մոտենում է Ռիմային) Ռիման, վերջապես ազ-
ջիկ ես և պետք է ամուսնանաս:

ՌԻՄԱ. Որե՞նք է, ի՞նչ է:

ԱՆՆԱ. Այո, զարավոր որենք է:

ՌԻՄԱ. (Միծաղում է) Դարավոր որենք է...

ԱՆՆԱ. Ռիմա, այնպիսի յերիտասարդ, ինչպիսին Ար-
մենն է...

ՌԻՄԱ. (Սրճեղած) Վոչ մի Արմեն և վոչ ել վորեն
ուրիշը: Յես ասացի, վոր ամուսին չեմ փնտ-
ռում:

ԱՆՆԱ. Շատ լավ, բայց պատասխան պիտի տա:

ՌԻՄԱ. Ո՛ւմ:

ԱՆՆԱ. Արմենին:

ՌԻՄԱ. Միթե Արմենը գիտե այդ մասին:

ԱՆՆԱ. Ի՞նչպես: Յեթե Արմենը չգիտե, ապա թվ գի-

տե: Չե՞ վոր նա ինքն ե խնդրել ինձանից քո՞

ձեռքը:

ՌԻՄԱ. Իմ ձեռքը միայն ինձանից կխնդրեն:

ԱՆՆԱ. Յես սխալ արտահայտվեցի, նա խնդրեց ինձանից՝ միայն շոշափել քո տրամադրությունը:

ՌԻՄԱ. Շոշափեցի՞ր:

ԱՆՆԱ. Այո:

ՌԻՄԱ. Ինչպէս ե:

ԱՆՆԱ. Տրամադրիր ես:

ՌԻՄԱ. (Ապօքս) Մամա...

ԱՆՆԱ. (Կիտապիկելով նրան) Ռիմա, սողջիկո, բոլոր այն աղջիկները, վորոնք առաջին անգամ խրտչում են ամուսնությունից՝ նրանք ամենաշուտը ձրգաւում են դրան:

ՌԻՄԱ. Վերջին խոսք, մամա, ամուսին չեմ փնտռում:

ԱՆՆԱ. (Փիծաղելով) Ունե՞ս:

ՌԻՄԱ. Հեռանկարում՝ այո:

Լոուքյուն:

ԱՆՆԱ. Ռիմա, դու ինձանից բռն ես թաղցնում:

ՌԻՄԱ. Ստիպված եմ այդպես ասել՝ յերբ դու ինձ համար պատրաստի ամուսիններ ես գտնում:

ԱՆՆԱ. Լավ, իսկ ինչ պիտի պատասխանես Արմենին:

ՌԻՄԱ. Պատրաստվում ե ինձ առաջարկել:

ԱՆՆԱ. Այո:

ՌԻՄԱ. (Բարձր յել ցասկոս) Յես կպատասխանեմ նրան:

ԱՆՆԱ. Չարահալու վնչ մի կարիք չկա, աղջիկա:

ՌԻՄԱ. (Ինքնախօս) Արդոք պիտի զղջամ վերադառնալու համար: Յես մի թռչուն եյի առանց վանդակի, մի թռչուն վարդագուլին թևերով: Ասա՛ ինձ, մամա...

Մտնում ե Արմենը առանց աշխատանցի շորերի, հագ-
ն լած, մագերը խնամքով սանրած: Ներս մտնելուն պես Ան-
նան աչքով Յշան ե անում՝ վռնիչ շատել:

ԱՐՄԵՆ. (Շփոթված, բայց զլխի քնկնելով) Բճրե ձեզ:

ԱՆՆԱ. Բճրե:

ԱՐՄԵՆ. (Ռիմային) Բճրե ձեզ:

ՌԻՄԱ. Բճրե:

ԱՐՄԵՆ. Վստահ եմ, վոր յես ձեզ խանգարեցի:

ՌԻՄԱ. Ընդհակառակը, դուք ոգնեցիք, վոր վերջ գրա-
նի մի չափսզանց անախորժ խոսակցություն:

Արմենը հարցական նայում ե Աննային:

ԱՆՆԱ. Ինչպես տեսնում եմ, այսօր ազոթի հետ գործ
չունեք:

ԱՐՄԵՆ. Այո: Յես կցանկանայի այսօր դրադիել մի-
այն սրտի գործերով:

ԱՆՆԱ. (Աչքով նշան ե անում չխոսել այդ ժառին):

ՌԻՄԱ. Թերևս յես խանգարում եմ ձեր հետագա խո-
սակցությանը: (Գնում ե):

ԱՆՆԱ. Ռիմա, սպասի՛ր:

ՌԻՄԱ. (Գլուխը կես յես դարձնելով) Խոսեցե՞ք աղաա:
Յես գիտեմ, կարեւոր խոսակցություն կունենաք:

ԱՆՆԱ. Ռիմա...

Ռիման գնում ե պատշգամբի դռնով:

Լոուքյուն:

ԱՐՄԵՆ. Անհա Դավիդովնա, ինչպես տեսնում եմ, իմ
գործերը անհաջող են:

ԱՆՆԱ. Ճիշտն ասած՝ անհաջող չի կարելի ասել:

ԱՐՄԵՆ Ապա:

ԱՆՆԱ. Տատանվում ե, ինչպես բոլոր աղջիկներն ա-
ռաջին անգամ:

ԱՐՄԵՆ. Իսկ յեթե շարունակի տատանումը:

ԱՆՆԱ. Վոչինչ չկա, վոր ընդմիշտ լինի, վորքան շատ
տատանվի՝ այնքան շուտ կհամաձայնվի:

ԱՐՄԵՆ. Շատ ե տատանվում է թե...

ԱՆՆԱ. Բավական:

ԱՐՄԵՆ. Չարմանալի հակասություն ե:

ԱՆՆԱ. Այդպես ե:

ԱՐՄԵՆ. Քիմիսդում գոյություն ունեն այդպիսի լե-
յերություններ:

ԱՆՆԱ. Գոյություն ունեն այդ լեյերությունները ե մարդ-
կային կյանքում, մանավանդ սիրո մեջ:

ԱՐՄԵՆ. Ո՛հ, այդ բառը մի արտասանեք, Աննա Դա-
վիդովնա, սիրտս մի բան ե լինում:

ԱՆՆԱ. Վոչինչ, պետք ե վարժվել:

ԱՐՄԵՆ. Բայց ինչու չթողեցիք, վոր առաջարկեցի
ներա՛ն: Յիկեի ելի տրամադրված:

ԱՆՆԱ. Վե՛հ, ժամանակը չեր: Ավելի լավ ե լսնդրես
Քրիստափորից, վորպեսզի նա խոսի հետո: Ինձ
հետ մի քիչ... վերջերս, չգիտեմ ի՞նչ ունի: Թերևս
Չարուհին նրա միտքը պղտորել ե:

ԱՐՄԵՆ. Չարուհին:

ԱՆՆԱ. Այո:

ԱՐՄԵՆ. Չարուհին... Ինչո՞ւ...

ԱՆՆԱ. Ամեն ինչ շուտով կպարզվի: Կարիք չկա:
Խնդրիր Քրիստափորից, վոր խոսի նրա հետ:
Քրիստափորին չի մերժի:

ԱՐՄԵՆ. Բայց Չարուհին...

Մտնում ե Քրիստափորը:

ՔՐԻՍՏԱՓ.. Արմեն, այստեղ ես:

ԱՐՄԵՆ. Վե՛հ:

ՔՐԻՍՏԱՓ. (Ձարմացած) Այա վորտեղ ես:

ԱՐՄԵՆ. Յերազում, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Իսկ վորտեղ ե Չարուհին:

ԱՐՄԵՆ. Չգիտեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Թերևս նա ել մի յերազում...

ԱՐՄԵՆ. Ո՛վ գիտե, թերևս:

Աննայի աչքերից բարկության յեվ խանգի կայծեր են
բայում, բայց յերբ Քրիստափորի նայվածքը հանդիպում
ե իրեն՝ զապում ե:

ՔՐԻՍՏԱՓ. Իսկ վորտեղ ե Ռիման:

ԱՐՄԵՆ. Պատշգամբում:

ԱՆՆԱ. Տարրերինակ աղջիկ ե դառել:

Գնում ե դեպի պատշգամբ. Քրիստափորը յետևից շեշ-
տակի նայում ե : Լուսքյուն:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, հանգստյան բացառիկ
որ... պիտի լիներ, բայց...

ՔՐԻՍՏԱՓ. Հետո:

ԱՐՄԵՆ. Չեղավ:

Լուսքյուն:

ԱՐՄԵՆ. Ինչո՞ւ, Քրիստափոր Իվանիչ, չեք հարցնում,
թե ի՞նչ բացառիկի մասին ե խոսքը:

ՔՐԻՍՏԱՓ. Ուզում ես ասել:

ԱՐՄԵՆ. Այո, յեթե հարցնեք:

ՔՐԻՍՏԱՓ. (Ձարմացած նայում ե նրան):

ԱՐՄԵՆ. Ինչո՞ւ չեք հետաքրքրվում, Քրիստափոր
Իվանիչ, յես ձեզ ուզում եմ ասել... ուզում եմ
ասել իմ սրտում գոյություն ունեցող տմենա-
մեծ բանը:

ՔՐԻՍՏՍՖ. Աստ:

ԱՐՄԵՆ. Հետաքրքրակի՞ն է:

ՔՐԻՍՏՍՖ. Մի բան, վարի մասին վոչինչ չգիտեմ,
ինչպէս կարող եմ ասել՝ հետաքրքրական է, թե
վոչ:

ԱՐՄԵՆ. (Պատասխանելով ասելու) Քրիստափոր Իվա-
նիչ:

Լուրջուն:

ՔՐԻՍՏՍՖ. Նո՛ւ, Արմէն, յեղի՞ր անկեղծ: Յեկեղ՞ ես
ինձ մի բան ասելու, քո սրտի ամենամեծ բանը,
նո՛ւ, աստ:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ... ուզում եյի ասել...
Ռիման...

Մտնում ե Ռիման պատշգամբից:

ՌԻՄԱ. Մաման այստեղ չէ:

ԱՐՄԵՆ. Աննա Դավիդովնան ձեր յետեից յեկա՞վ:

ՌԻՄԱ. Ի՞նչ յետեից: Չտեսա: (Ուզում ե գնալ) :

ՔՐԻՍՏՍՖ. Ռիմա...

ՌԻՄԱ. Լսում եմ:

ՔՐԻՍՏՍՖ. Մնա այստեղ (Արմենին) Նո՛ւ, Արմէն, շա-
րունակի՛ր:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ... (սասիկ շփոթված),
ուրիշ անգամ... Այնպես... յես ուզում եյի...

ՌԻՄԱ. Յես արգելք չեղա ձեզ:

ԱՐՄԵՆ. Վոչ, ի՛նչ եք ասում:

ՌԻՄԱ. Յես կարող եմ գնալ (վեր ե կենում գնալու):

ԱՐՄԵՆ. (Առաջը կտրելով) Խնդրում եմ:

Միաժամանակ մտնում են Աննան պատշգամբից յիվ Զա-
րուհին դռնից:

ԶԱՐ ՌԻՀԻ. Յեթե հարցնեք թե ինչո՛ւ եք յեկել՝
չեմ կարող ասել:

ՔՐԻՍՏՍՖ. Իսկ ինչո՛ւ չպիտի գայիր:

Աննան նայվածքը չի հեռացնում Զարուհուց յիվ ամուս-
նուց:

ԶԱՐ ՌԻՀԻ. Հանգստի ո՞ր ե, Քրիստափոր Իվանիչ, ին-
չո՛ւ պիտի գայի:

ՌԻՄԱ. Պետք ե բացատրել այդ սովորութեան ու-
ժով:

ԶԱՐ ՌԻՀԻ. Հենց այդպես: Մարդ վատ ե զգում, յերբ
հեռանում ե աշխատանքի վայրից:

ԱՆՆԱ. Յեվ զանազան այլ պատճառներով:

ԶԱՐ ՌԻՀԻ. (Արմենին) Դու ինչո՛ւ ես յեկել:

ԱՐՄԵՆ. Չանազան այլ պատճառներով:

ՌԻՄԱ. (Բարձր ծիծաղում ե):

ԱՆՆԱ. (Սասելով) Ռիմա:

ՌԻՄԱ. (Դադարեցնելով ծիծաղը) Պատճառներ, պատ-
ճառներ (քերել ծիծաղ), զանազան այլ պատ-
ճառներ:

Աննան յիվ Արմենը իրար են նայում:

ՔՐԻՍՏՍՖ. Այնպես, ուզում եմ թեյ խմել:

ԱՆՆԱ. Թեյը պատրաստ ե, Քրիստափոր:

ՔՐԻՍՏՍՖ. Լա՛վ ե (Գնում ե պատշգամբի դռնով):

Աննան գնում ե նրա յետովից: Զարուհին գնում ե դե-
պի աշխատանոցը: Մնում են Ռիման յիվ Արմենը: Ռի-
ան նստում ե Քրիստափորի սեղանին: Նայում ե մըտա-
խոս: Արմենը մտնում ե, ուզում ե մի բան ասել:

ՌԻՄԱ. (Տեսնելով Արմենի շփոթւթյունը) Դուք չե՞ք
ուզում թեյ խմել:

ԱՐՄԵՆ. Շատ ելի ուզում...

ՌԻՄԱ. Գնանք:

ԱՐՄԵՆ. Բայց թեյ խմելուց առաջ... Ես ձեզ մի բան պիտի հարցնեյի:

ՌԻՄԱ. Խնդրեմ:

ԱՐՄԵՆ. Դուք յերբեմն, յերբ մենակ եք լինում, դա-
նազան բաներ չեք մտածում:

ՌԻՄԱ. Մտածում եմ, ի՞նչպես չե:

ԱՐՄԵՆ. Որինակի համար՝ ի՞նչ եք մտածում:

ՌԻՄԱ. Յերբ մենակ եմ լինում՝ մտածում եմ, թե ի՞նչ
լավ է մենակ լինելը:

ԱՐՄԵՆ. Իսկ յերբևիցե չեք մտածում լինել ընկեր-
ների կամ մի ընկերոջ հետ:

ՌԻՄԱ. Մտածում եմ:

ԱՐՄԵՆ. (Չափազանց ուրախացած) Հետո ի՞նչ յեզրա-
կացության եք գալիս:

ՌԻՄԱ. Դուքս եմ գալիս, պատահում եմ մարդկանց,
լինում եմ նրանց հետ այնքան ժամանակ, մին-
չև նորից ցանկանում եմ մենակությունը:

ԱՐՄԵՆ. Իսկ յերբեք չեք ցանկանում ունենալ մի
մտերիմ, չափազանց մտերիմ ընկեր, վոր միշտ
լինի ձեզ հետ:

ՌԻՄԱ. Յես ձեզ չեմ հասկանում:

ԱՐՄԵՆ. Բացատրեմ իմ միտքը: Որինակի համար...
Մտնում ե Ալվանը:

ԱԼՎԱՆ. Բարե ձեզ:

ՌԻՄԱ. Բարե, բարե (Առմենին) Տեսնում եք մենակ
եյինք, ցանկանում եյինք մենակ չլինել, ահա
յեկավ Ալվանը:

ԱՐՄԵՆ. Յես կարծում եմ մեզ սպասում են թեյի:

Դնում ե սրտեղած:

ԱԼՎԱՆ. (Տարորհման նայելով նրա յեսեվից) Սրան ի՞նչ
պատահեց:

ՌԻՄԱ. Սրան այնքան բան չի պատահել, վորքան
պիտի պատահի:

ԱԼՎԱՆ. Կարճ կապի, թող գնա գործին:

ՌԻՄԱ. Վոչինչ չի ասում, վոր պատասխանեմ, յեթե
չգալի՝ կարծես սկսել եր արդեն:

ԱԼՎԱՆ. Ի՞նչ եր ասում:

ՌԻՄԱ. Մենակություն, ընկերներ, մի չափազանց մը-
տերիմ ընկեր...

ԱԼՎԱՆ. Բավական մոտեցել ե:

Անուն հայտնվում ե պատեզամբի դռանը:

ԱՆՆԱ. (Տեսնելով յեվ Ալվանին) Ալվան, դու ել այս-
տեղ ես: Ձեզ ենք սպասում:

ՌԻՄԱ. Գալիս ենք: Դու հոգ տար Արմենին, չա-
փազանց հուզված ե, մաճա:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Պատեցամբ:

Ռիման Յատած գիրք է կորդուս, Չափազանց հուզված, գլխի անխնամ հարգաբանով ներս է մտնում Աննան: Այսօր է հուզված, վոր ճայնը կերկրում է յեվ հազիվ է կարողանում խոսել: Նստում է աքոսին՝ Ռիմայի դիմաց:

ԱՆՆԱ. Ռիմա, լավ վոր այստեղ ես:

ՌԻՄԱ. (Դուրսը վեր բարձրացնելով՝ տեսնում է մոր այլալված յեվ հուզված կերպարանքը) Մամա (վոսի է կանգնում յեվ մոտենում մորը), ի՞նչ է պատահել:

ԱՆՆԱ. (Գրկելով նրան) Ռիմա, դու ինձ պետք է ողնես: Աշխարհում ինձ վրիժնիչ չի մնացել, բացի քեզանից: Իսկ դու միայն մի հատիկ մայր ունես վողջ աշխարհում:

ՌԻՄԱ. Մամա (համբուրում է նրան):

ԱՆՆԱ. Յանկարում եմ միայն մահը: Այնպես ուրախությամբ կդիմավորեմ յես նրան: Կհագնեմ առաջին ամուսնության հարսանեկան սպիտակ շո-

րերս, եյն ամուսնության՝ վորից դու ծնվեցիր, Ռիմա:

ՌԻՄԱ. Մամա...

ԱՆՆԱ. Կհագնեմ սպիտակ շորերս, կփաթաթվեմ մահվան և կդնամ խաղաղ, միայն վախենում եմ առաջին քայլերից: Ոգնիր ինձ, Ռիմա:

ՌԻՄԱ. Ի՞նչ է պատահել, մայր:

ԱՆՆԱ. Գրիստափորի անտարբերությունը մահ է ինձ համար:

ՌԻՄԱ. Արհամարհի՛ր նրան և կխաղաղվես:

ԱՆՆԱ. Ձե՛մ կարող: Ուզում եմ, Ռիմա, ուզում եմ միշտ անզամատել, ատել ոճի նման, բայց չեմ կարող:

ՌԻՄԱ. Նոր ի՞նչ է պատահել:

ԱՆՆԱ. Վրիժնիչ:

ՌԻՄԱ. Ապա ինչո՞ւ ես այդպես հուզված:

ԱՆՆԱ. Կա մեկը, վոր ինձ խանդարում է, կամի կին, վոր փորում է իմ գերեզմանը:

ՌԻՄԱ. Իսկ ո՞վ է այդ կինը:

ԱՆՆԱ. Այդ կինը... Ձե՛մ ուզում ասել, բայց կա, գոյություն ունի:

ՌԻՄԱ. (Անասելի նրբերով պահելով իրեն) Մամա, չե՞ս սխալվում:

ԱՆՆԱ. Վրիժնիչ, չե՛մ սխալվում: Յես նրանից զգում եմ այդ կնոջ հոտը:

ՌԻՄԱ. (Ահաբեկված) Մամա...

ԱՆՆԱ. Բայց յես կփորեմ նրա գերեզմանը, նախքան նա կարողանա փորել իմ գերեզմանը: Դու վերադարձից հետո այդ կինը...

ՌԻՄԱ. (Ընդմիջելով) Չե՞ վոր ձեր հարաբերություններն արդեն վատացել եյին, մեծա՛, նախքան իմ վերադարձնալը: Դու ինձ պատճեցիր այդ հենց իմ վերադարձնալու առաջին գիշերը:

ԱՆՆԱ. Այո, ճիշտ ե, բայց ի՞նչ կապ ունի դա քո վերադարձի հետ:

ՌԻՄԱ. Մամա, քեզ չեմ հասկանում:

ԱՆՆԱ. Ռիմա, յես քո հորը թողի, քեզ թողի անհայր, և տմուկանությանս պատճառով մնացիր և անմայր, վորովհետև ստիպված եյինք քեզ հեռացնել տանից, և ահա այս բոլորի իբրև վարձատրություն Գրիստափորի անասելի անտարբերությունը Ռիմա, իմ անկողինն անգամ ըզգում ե նրա սառնությունը:

ՌԻՄԱ. Մամա, ավելի լավ կլիներ յես հեռանայի, իմ ներկայությունը ավելի կարծես խճճեց գործը:

ԱՆՆԱ. Ռիմա, դու գովել ես, այս սև որերին իմ ուրախության միակ շողը դու ես: Ամեն անգամ, յերբ հիշում եմ, վոր դու վերադարձել ես, հոգով փարվում եմ քեզ՝ իբրև վերջին հույսի սյանը:

ՌԻՄԱ. Յերանի՜ չգայի, մնայիք յերկուսդ առանձին, ձեր հարաբերությունները վերջի վերջո լավ կլինեյին, մի որ վատ, մի որ լավ և որերը կըմթնեյին ու կլուսանային:

ԱՆՆԱ. Յեթե յես չեմ փորձում ինքնասպանություն, նրա համար ե, վոր դու նա, իմ առաջին սիրո հասած միւրդ (ջեմադին, խելագար սեղմումներով համբուրում ե Ռիմային):

ՌԻՄԱ. Յես կփախչեմ այս միջավայրից, մեծա՛, յես այստեղ չեմ մնա:

ԱՆՆԱ. Ինձ ել քեզ հետ տար: Բացի քեզանից վնչ վոր չունեմ: Ռիմա, Ռիմա, յես դավաճանեցի հորդ, պետք ե մեկը դավաճանի ինձ, վորպեսզի յես պատժվեմ:

ՌԻՄԱ. Մամա, մինչև հիմա չեմ հարցրել, բայց ուզում եմ իմանալ—հայրա ի՞նչ եր արել քեզ, վոր դու դավաճանեցիր նրան:

ԱՆՆԱ. Վոչինչ: Լավ մարդ եր, չափազանց լավ մարդ:

ՌԻՄԱ. Իսկ ինչո՞ւ...

ԱՆՆԱ. (Ընդհատելով) Մի հարցնի, Ռիմա, միայն

մի բան իմացիր—Գրիստափորը յերիտասարդ եր:

ՌԻՄԱ. (Ինքնախեղ) Յերիտասարդ...

ԱՆՆԱ. Այժմ ել գրավիչ ե նա, Ռիմա, սիրում եմ նրան:

ՌԻՄԱ. (Ինքնախեղ) Այժմ ել գրավիչ ե...

ԱՆՆԱ. Ռիմա, խոսի՛ր նրա հետ, գեթ մի անգամ: Ուզում եմ իմանալ, թե ո՞վ ե այն կինը, վոր թուշափորում ե իմ կյանքը: Ռիմա, տեսնում ես իմ սպիտակ մազերը և, իհարկե, կծիծաղես, վոր պայծարում եմ սիրո համար: Ռիմա, մի մոռանա այս խոսքը—սերը հարկավոր ե և այն ժամանակ, յերբ սպիտակում եմ մազերը:

Լցվում եմ աչիքն արցունքով, վորք հետզհետե փոխվում ե հեկեկամբի:

ՌԻՄԱ. Մամա, յես կհեռանամ այստեղից:

ԱՆՆԱ. (Սրբելով աչիքը յեվ զսպելով իրեն) Խոստանում եմ յերբեք լաց չլինել, և, յեթե ուզում

ես, Ռիմա, քեզ այլևս չեմ խոսի այս մասին:
Ցավում եմ, վոր քո վերադարձը դիւարեցինք
այս անախորժություններով:

Լուսին:

Վերտեղ ե Գրիստափորը, Ռիմա:

ՌիՄԱ. Աշխատանքում:

ԱՆՆԱ. Ո՞վ կա այնտեղ:

ՌիՄԱ. Ամեն ոք վա մարդիկը:

ԱՆՆԱ. Դու այնտեղ յեղե՞լ ես:

ՌիՄԱ. Այո:

ԱՆՆԱ. Արմենն այնտեղ ե:

ՌիՄԱ. Այո:

ԱՆՆԱ. Զարուհի՞ն:

ՌիՄԱ. Այո:

ԱՆՆԱ. Ի՞նչ էյին անում:

ՌիՄԱ. Աշխատում էին:

ԱՆՆԱ. Դու վորեւ խոսակցություն չունեցա՞ր Արմե-
նի հետ:

ՌիՄԱ. Վո՛չ:

ԱՆՆԱ. Ռիմա, այն ուրից ի վեր մտածե՞լ ես այդ ուղ-
ղությամբ:

ՌիՄԱ. Ի՞նչ ուղղությամբ:

ԱՆՆԱ. Արմենի...

ՌիՄԱ. (Ընդհատելով) Մամա, յես զարմանում եմ
քեզ վրա: Ապրում ես յերկրորդ ամուսնության
տրագեդիան և բուռն կերպով ցանկանում ես,
վոր յես ամուսնանամ, և այն ել մի մարդու
հետ, վորին յերբեք չեմ համակրում:

ԱՆՆԱ. Յես չեմ ասում՝ ամուսնացիր:

ՌիՄԱ. (Քմծիծաղ) Ապա:

ԱՆՆԱ. Ասում եմ՝ մտածիր այդ մասին:

ՌիՄԱ. Լավ, մտածեմ, հետո:

ԱՆՆԱ. Ռիմա, յես ուզում եմ քեզ տեսնել ամուսնա-
ցած՝ նախքան իմ մահը: Զգիտեմ ինչո՞ւ
բայց ուզում եմ, վոր բոլորովին մենակ չմնաս,
յերբ յես չեմ լինի այս աշխարհում:

ՌիՄԱ. Բայց ինչո՞ւ ես մտածում մահվան մասին:

ԱՆՆԱ. (Մոռալով) Այս բոլորն ինձ տանում են դե-
պի մահ, յիթե յես ել չգնամ՝ մահն ինքը կգա:

ՌիՄԱ. Ինչո՞ւ, ինչո՞ւ յես վերադարձա (սկսում ե հեկե-
կալ դառնորեն):

ԱՆՆԱ. (Գրեկով մտնւ յեկ սրբելով արցունքներ) Յես
խոստացա քեզ լաց չլինել: Դու ել խոստացիր
ինձ, վոր լաց չպիտի լինես:

ՌիՄԱ. Մամա, խոսում ես մահվան մասին և պահան-
ջում, վոր լաց չլինեմ:

ԱՆՆԱ, Այլևս վո՛չ մի խոսք մահվան և սիրո մասին:
Նստիր և կարդա: Արի սեղանի մոտ:

Թեպից բռնած՝ տանում նստեցնում ե անոթի առաջ
իջպես պատկերի սկզբումն եր:

ԱՆՆԱ. Յեսեմ ի՞նչ ես կարդում (նայում ե կարդացած
գիրքը), չեմ կարդացել, հետաքրքրահան ե:

ՌիՄԱ. (Սչիբեր սրբելով) Նոր եմ սկսել: Թվում ե, վոր
հետաքրքրական պիտի լինի: Ինչո՞ւ առհասարակ
չեմ կարդում, մամա:

ԱՆՆԱ. Զգիտեմ:

ՌիՄԱ. Կարդա, մամա, գրքերը միթաքահան են:

ԱՆՆԱ. Յերբ կյանքը...

ՌԻՄԱ. (Ընդհատելով) Վոչ մի խոսք կյանքի մասին:
Խոսելով կյանքի մասին՝ կհասնենք մահվան: Մա-
հը կյանքին ե պատկանում:

ԱՆՆԱ. (Հառաչելով) Յես գնացի: (Սկսում ե ֆայել վոչ
քե դեպի պատշգամբ, այլ դեպի ախառանոց):

ՌԻՄԱ. Մամա, ուր ես գնում:

ԱՆՆԱ. Աշխատանոց:

ՌԻՄԱ. (Վոսի կանգնելով յեվ մոտենալով նրան) Իսկ
ինչո՞ւ ես գնում աշխատանոց:

ԱՆՆԱ. Քրիստափորին տեսնելու:

ՌԻՄԱ. Մի գնա, մամա:

ԱՆՆԱ. Ինչո՞ւ:

ՌԻՄԱ. Մի գնա, ասում եմ:

ԱՆՆԱ. Քրիստափորն ասաց, վոր ինձ արգելեա աշխա-
տանոց գնալու:

ՌԻՄԱ. Ինչե՞ր ես մտածում: Վոչ: Ասում եմ, մի գնա,
վորովհետեւ նրանք զբաղված են, վճռական վոր-
ձեր են կատարում:

ԱՆՆԱ. Անաստունների կեր...

ՌԻՄԱ. Մի ծաղրիր, մամա, ահա դրանք են, վոր հե-
ռացնում են քեզ քո ամուսնուց:

ԱՆՆԱ. Չեմ կարող հաշտվել այդ գաղափարի հետ:
Դու գիտես, պատահել ե մի քանի գիշեր, վոր
Քրիստափորը լուսացրել ե աշխատանոցում:

ՌԻՄԱ. Այո, գիտեմ:

ԱՆՆԱ. Քայքայվում ե առողջությունը: Նստի՛ր և կար-
դա, Լեիմա, յես գնացի:

Դսում ե: Որման վերադառնում ե սեղանը, փորձում ե
կարդալ, բայց չի կարողանում:

ՌԻՄԱ. Կա մի կին, վոր փորում ե իմ գերեզմանը...
(Ավելի բարձր) Այո, կա մի կին, վոր փորում
ե քո գերեզմանը, մամա....

Հեկեկանով ընկնում ե սեղանի վրա:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Պ Ա Տ Կ Ե Ր

Աշխատանքը:

Քրիստափորը յիվ Արմենը աշխատում են յիվ միտած-
սանազ խոսում:

ԱՐՄԵՆ. Յես կարծում եմ, վոր նախնական փորձա-
րի արդյունքները պետք է հրապարակել

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ մի ժամանակ:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, դա վոչնչով չի խոն-
դարի մեր աշխատանքին, իսկ մինչև այժմ ձեռք
բերած արդյունքները ֆուրոր կարող են հա-
նել:

ՔՐԻՍՏԱՓ. Ֆուրորի յիտեից մի ընկնի, սա լուրջ գի-
տական աշխատանք է և կարիք չկա ռեկլամի,
մինչև վերջնական լուծումը:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, ինչպես ձեր կամքը
կուզի:

ՔՐԻՍՏԱՓ. Կամքի խնդիր չկա, գիտության պա-
հանջն է պա:

Լուսբյում: Յերկուսն էլ ամբողջատ ինչ վեր աշխ-
տում են, լցնում, դատարկում, խառնում յիվ այլ:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ...

ՔՐԻՍՏԱՓ. Ըհ...

ԱՐՄԵՆ. Ձեք ցանկանա, վոր յես ամուսնանամ...

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ...

ԱՐՄԵՆ. (Ապառհար) Ինչհա:

ՔՐԻՍՏԱՓ. Վորովհետև յես ինքս ամուսնացած եմ:

ԱՐՄԵՆ. (Մի քիչ արտառոտ ծիծաղում է) Ձեր ամուս-
նությունն ինձ չի բավարարում: Հարկավոր է,
վոր յես ամուսնանամ, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Ի՜նչ հիմար են չամուսնացածները:

ԱՐՄԵՆ. Բոլոր ամուսնացածներն այդպես են ասում:

ՔՐԻՍՏԱՓ. Յեվ չես հավատում:

ԱՐՄԵՆ. Ընդհակառակը, հավատում եմ, դրա համար
եվ ուզում եմ ամուսնանալ:

ՔՐԻՍՏԱՓ. Հավատալով հանդերձ:

ԱՐՄԵՆ. Այո: Վերջապես մինչև յերբ պետք է հիմար
մնամ: Ձեք վոր մինչև մարդ չամուսնանա՝ չի
խելոքանա: Հիմարանում են՝ ամուսնանում են՝
կամ վորովհետև հիմար են՝ ամուսնանում են,
բայց ամուսնանալով՝ խելոքանում են:

ՔՐԻՍՏԱՓ. Յես խորհուրդ կտամ քեզ հիմար մնալ:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, ամբ... ուզում եմ ամ-
ուսնանալ...

ՔՐԻՍՏԱՓՈՐ. Խնդրեմ...

Լուսբյում: Քրիստափորը զրազվում է ինչ վեր մի փոր-
ձով:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ,

ՔՐԻՍՏՈՍՔ. ԸՆՇԸ...

ԱՐՄԵՆ. Ողնեցեք ինձ այս խնդրում:

ՔՐԻՍՏՈՍՔ. (Զարմացած) Շարունակիր:

ԱՐՄԵՆ. Քիմիայում դուք ինձ բերել, հասցրել եք
այս մակարդակին՝ ողնեցեք ինձ նաև այս աս-
պարիզում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Սիրո՛ւ ամուսնության ասպարիզում:

ԱՐՄԵՆ. Այո:

ՔՐԻՍՏՈՍՔ. Մասնագետ չեմ:

ԱՐՄԵՆ. Մասնագետ լինելը հարկավոր չե՛ս Ռիման
ձեզ շատ հարգում ե, յես տեսնում եմ, վոր նա
ձեռն ազնվի ե հարգում, քան իր մորը:

ՔՐԻՍՏՈՍՔ. Կարող ե պատահել, բայց Ռիման ինչո՞ւ
մեջ ընկավ:

ԱՐՄԵՆ. Յես սիրում եմ նրան:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ոհո՛... իսկ նա քեզ սիրում ե:

ԱՐՄԵՆ. Բոլորովին անհայտ ե:

Լուսբյում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Շարունակիր:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, յեթե դուք ցանկանաք...
Կարող եք...

Լուսբյում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ի՞նչ:

ԱՐՄԵՆ. Չգիտեմ... Յեթե միայն ուզենաք:

ՔՐԻՍՏՈՍՔ. Յեթե ուզենամ: Շատ լավ, ուզեցա: Ի՞նչ
Կարող եմ անել:

ԱՐՄԵՆ. Յեթե դուք ուզենաք, Քրիստափոր Իվանիչ,

Կարող եք ջերմացնել նրա սիրտը գետի ինձ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ահա թե ի՞նչ:

ԱՐՄԵՆ. (Խեղագորի պես բռնում ե նրա ձեռքը) Քրի-
ստափոր Իվանիչ...

ՔՐԻՍՏՈՍՔ. Իսկ յեթե նա ձեզ չի սիրում:

ԱՐՄԵՆ. Դա ե, վոր ինձ շատ ե զարմացնում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ինչո՞ւ:

ԱՐՄԵՆ. Կարծում եմ... Կարծում եմ հետաքրքիր
տղամարդ եմ:

Լուսբյում:

Դուք ի՞նչ եք կարծում, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Վոչինչ:

ԱՐՄԵՆ. Բոլորովին վոչինչ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Չեր գործն անհույս ե, Արմեն:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, դուք ինձ մահվան
դուռն եք հասցնում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Չե՛, այդքամ հեռու չեմ տանի:

ԱՐՄԵՆ. Յես ինքս կհասնիմ այնտեղ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Այդքան արագաթռիչ չես:

ԱՐՄԵՆ. (Լուրջ) Կտեսնեք, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Արմեն, լուրջ խոսենք (ձեռքը դնում ե նրա
ուսին):

ԱՐՄԵՆ. Լուրջ եմ խոսում:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ավելի լուրջ: Վոչ վոք չի կարող սիրո
ճանապարհը հարթել, դու ինքդ պետք ե հար-
թես այդ ճանապարհը:

ԱՐՄԵՆ. Ի՞նչպես:

ՔՐԻՍՏՈՍՔ. Աշխարհում ինչքան տղամարդ կա, այն-
քան ձե կա: Դու պիտի գտնես քո ուրույն ձեք:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, վախենում եմ:

ՔՐԻՍՏՈՍՔ. Ուրեմն չես սիրում:

ԱՐՄԵՆ. Սիրում եմ:

ՔՐԻՍՏՍԱՓ. Վոչ, չես սիրում: Յեթե սիրում ես, չե՞ս վախենա: Գո մեջդարթնել ետղամարդը, և զարթնեց այն ժամանակ՝ յերբ Ռիման հայտնվեց մեր տանը, ահա կին, և ցանկանում ես այդ կինը: Ինչ տեսակ աղջիկ ել վոր հայտնվե՞ր՝ դու պիտի ուզենայիր:

ԱՐՄԵՆ. Քրիստափոր Իվանիչ, յերդվում եմ, այդպես չե:

Մտնում ե Զարուհին:

ՔՐԻՍՏՍԱՓ. Այդ մասին խոսենք Զարուհու հետ ել:

ԱՐՄԵՆ. (Ահաբեկված) Վոչ, վոչ, վոչ: Քրիստափոր Իվանիչ, խնդրում եմ այդ մասին վոչ մի խոսք վոչ վոքի:

ՋԱՐՈՒՀԻ. Մի վախենա, յես գիտեմ ինչի մասին ե խոսքը:

ՔՐԻՍՏՍԱՓ. Ինչի մասին:

ԱՐՄԵՆ. Խնդրում եմ...

ՔՐԻՍՏՍԱՓ. Նո, Արմեն, թող ասի, մենք վոչինչ չենք հարցնի: Ասա, Զարուհի:

ՋԱՐՈՒՀԻ. Ասեմ: Մինչև Արմենը չհամաձայնվի՝ չեմ ասի:

ՔՐԻՍՏՍԱՓ. Նո, Արմեն:

ԱՐՄԵՆ. Լավ, ասա:

ՔՐԻՍՏՍԱՓ. Ասա:

ՋԱՐՈՒՀԻ. Խոսքը Մոսկվա գնալու մասին ե:

ԱՐՄԵՆ. (Ուրախացած) Ինչպես իմացավ:

ՔՐԻՍՏՍԱՓ. Իսկապես, ինչպես իմացավ: Կարծում ե՞ս յինք, վոր Զարուհին միամիտ աղջիկ ե, բայց տեսնում եք:

ՋԱՐՈՒՀԻ. Արմենն անկեղծորեն և բուռն կերպով ձեռնառում ե Մոսկվա, բայց ամուսնության դադարը խանգարում ե:

ՔՐԻՍՏՍԱՓ. (Փոքիացնում ե սկսում ե դուրս գնալ):

ՋԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ, յես ձեզ բան ունեմ ասելու:

ՔՐԻՍՏՍԱՓ. (Հազիվ ծիծաղը զսպելով) Արթ գահլիճ, այնտեղ կասես (գնում ե):

ՋԱՐՈՒՀԻ. Արմեն, յերկու գաղափարի չի կարելի ծառայել (գնում ե):

ԱՐՄԵՆ. (Մեմակ) Բոլորը ծիծաղում են ինձ վրա: Իրավունք ունենա: Յես վոր այնքան անդոր եմ, վոր իմ սիրո գործերի համար դիմում եմ ուրիշներին աջակցության... Զարուհին գիտե ամեն բան, ինչպես ծաղրեց նա ինձ, Մոսկվա, ապա ամուսնություն: Յես ինքս պետք ե կարգադրեմ իմ գործերը:

Մտնում ե Ռիման:

ՌԻՄԱ. Քրիստափոր Իվանիչն այստեղ չէ:

ԱՐՄԵՆ. Այստեղ ե ու այստեղ չե:

ՌԻՄԱ. Ի՞նչ ե նշանակում:

ԱՐՄԵՆ. (Հանկուրծ աբխացած) Ռիման (չոփում ե առաջը) յես քեզ սիրում եմ:

ՌԻՄԱ. (Մրհնեղած) Նախ և առաջ կարգին ասացե՛ք: Դա ի՞նչ ձև ե, վերջապես: Վեր կացե՛ք:

ԱՐՄԵՆ. Թույլ տուր ինձ իմ ցանկացած ձևով աքաղահայտվել: Յես քեզ սիրում եմ:

ՌԻՄԱ. (Յասկոս) Վեր կացե՛ք:

ԱՐՄԵՆ. (Վեր ե կենում):

ՌԻՄԱ. Այժմ ասացեք, ի՞նչ եք ասում:

ԱՐՄԵՆ. Վոչինչ չեմ ասում (համուսնի և ախարատանցի խաղաղքը, նետում է մի կողմ յեւ սկսում է գնալ՝ ասելով) Յեա հիմար եմ, ուրիշ վոչինչ:

ՌԻՄԱ. Կատարյալ գոհանոց եմ ընկել: Սա ի՞նչ բան է:

Մտնում է Գրիստափորը:

ՔՐԻՍՏԱՓ. (Համկարծակիի գալով) Ռիմա...

ՌԻՄԱ. Քրիստափոր...

Նետվում է նրա գիրկը:

ՔՐԻՍՏԱՓ. Չգիտեմ, Արմենն այստեղ է:

ՌԻՄԱ. Վոչ, նա գնաց:

ՔՐԻՍՏԱՓ. Քեզ հետ վոչ մի խոսակցություն չունենցե՛

ցե՛վ:

ՌԻՄԱ. Վոչ միայն խոսակցություն, այլև ամեն բան:

ՔՐԻՍՏԱՓ. Նո՛ւ...

ՌԻՄԱ. Չոքել, բացատրություն և դուրս: Ո՛ւր վախ՛

չեմ յեա: Քրիստափոր, ասա ինձ մի յելք, ո՛ւր

վախչեմ, վորտե՛ղ զովացնեմ իմ տոչորվող սիր-

տը: Քրիստափոր...

Մտնում է Ջարուխին յեւ զգալով, վաք ամբիջապեա

լուսքյուն տիրեց՝ նայում է՝ յերկուսին:

ՋԱՐՈՒՅԻ. Յեա ձեզ խանգարեցի:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ:

ՌԻՄԱ. Վոչ, վոչ, վոչ:

ՔՐԻՍՏԱՓ. Արմենը... (Ձեռքով ցույց է տալիս, վոր ա-

սել է Ռիմային):

ՋԱՐՈՒՅԻ. Հիմար է նա, ուրիշ վոչինչ:

ՌԻՄԱ. Ինքն եւ այնպեա է կարծում:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիմա, դու գնա և հանգստացիր: Այո,

այո, գնա (տոյելով նրան՝ տանում է մինչեւ դու-

ռը):

ՋԱՐՈՒՅԻ. Ո՛ւր գնաց Արմենը:

ՔՐԻՍՏԱՓ. Չգիտեմ: Ջարուհի, ինչ վոր վառ բան եմ

տեսնում հեղուկ:

ՋԱՐՈՒՅԻ. (Մոտենալով) Քրիստափոր իվանիչ, չպետք

է կորցնել արիությունը, ձեզ վայել է սառնա-

սրտությունը:

ՔՐԻՍՏԱՓ. Միակ հատկությունը, վոր չունեմ:

ՋԱՐՈՒՅԻ. Ունեք, բայց կորցնում եք:

ՔՐԻՍՏԱՓ. Ջարուհի (ձեռքը դնելով նրա ուսին) ասա

ինձ անկեղծորեն, ահա յերեք տարի է, ինձ

հետ աշխատում ես, գիտեմ վոր դու ինձ հար-

գում ես:

ՋԱՐՈՒՅԻ. Այո:

ՔՐԻՍՏԱՓ. Ասա անկեղծորեն, դու գիտե՞ս, թե ինչ է

կատարվում այստեղ:

ՋԱՐՈՒՅԻ. Այո:

ՔՐԻՍՏԱՓ. Արդյոք վորեւ ուրիշը գիտե՞:

ՋԱՐՈՒՅԻ. Վոչ:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ վոր:

ՋԱՐՈՒՅԻ. Վոչ վոր, Քրիստափոր իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Ա՛խ, ինչ լավ է, վոր գիտես: Կուզեյի

մեկը, վորին բանայի իմ սիրտը, հարցնեյի նը-

բան, թե հանցավոր եմ:

ՋԱՐՈՒՅԻ. Վոչ, հանցավոր չեք:

ՔՐԻՍՏԱՓ. Անկեղծ ես ասում:

ՋԱՐՈՒՅԻ. Այո, ավելի քան անկեղծ:

ՔՐԻՍՏԱՓ. Ասա ինձ, Ջարուհի...

Մտնում ե Աննան, մի չար հայացք ե գցում Զարուհու վրա:

ԱՆՆԱ. Քրիստափոր, գնանք պատշգամբ, Ռիման մեզ սպասում ե:

ՔՐԻՍՏԱՓ. (Յերկար յեկ խորք նայելով Աննային).
Գնանք:

(Քրիստափոր յեկ Աննան գնում են դուռն:)

ԶԱՐՈՒՀԻ (Յերկար նայելով նրանց յեթևից, մենակ)
Աննա Դավիդովնա, քո սեփական արյունն ե քեզ
այրում:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԶՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Դանիելը:

Քրիստափորը զբաղված ե իր սեղանի մոտ: Մտնում ե
Զարուհին:

ԶԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ, խնդրում եմ իմ այս
ֆորմուլը ստուգեք, նախքան աշխատանքի անց-
նելը:

ՔՐԻՍՏԱՓ. (Վերցնում ե քուլքը) Նստի՛ր, Զարուհի,
(շենքոցով կարդում ե քուլքը) ճիշտ ե, ճիշտ ե (սա-
լիս ե քուլքը Զարուհուն):

ԶԱՐՈՒՀԻ. Մի քիչ կասկածում եյի:

ՔՐԻՍՏԱՓ. Նստի՛ր, ասում եմ:

ԶԱՐՈՒՀԻ. Աշխատանք ունեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչինչ, կաշխատես:

Զարուհին նստում ե:

ԶԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ, գտնում եք ձեր հո-
գու խաղաղությունը:

ՔՐԻՍՏԱՓ. Վոչ:

ՉԱՐՈՒՀԻ. Յես ձեզ մի խորհուրդ կառայի: Ներեցեք:
ՔՐԻՍՏԱՍՓ. Վոչի՛նչ, վոչի՛նչ...

Աթոռը մտնեմուս ե Զարուհու արքային: Այդ ժամանակ
Աննան մտնում ե պատշգամբ յեվ լուսամուտից տեսնե-
լով Քրիստափորի յեվ Զարուհու իրար մոտենալը՝ յես
ե քաշվում:

ՉԱՐՈՒՀԻ. Քրիստափորը իվանիչ, թողեք ամեն բան,
աշխատանոց ամբիոն, տուն, և ճամբորդեցեք
միառժամանակ: Կամ ալելի ճիշտը՝ փոխադրեցեք
աշխատանքները Լենինգրադ: Վստահացնում եմ
ձեզ՝ կթիթեանաք:

ՔՐԻՍՏԱՍՓ. (Քմծիծաղով) Փախումս:

ՉԱՐՈՒՀԻ. Ինչո՞ւ փախուստ:

ՔՐԻՍՏԱՍՓ. Փախուստ ե Զարուհի:

ՉԱՐՈՒՀԻ. Ասենք՝ փախուստ, հետո ի՞նչ:

ՔՐԻՍՏԱՍՓ. Ի՞նչպես կարելի ե փախչել սեփական
սրտից:

ՉԱՐՈՒՀԻ. Ժամանակը հզոր ե ժամանակը կմեղմաց-
նի ամեն ցավ: Ժամանակը կփշրի ամենակարծր
ժայռերը:

ՔՐԻՍՏԱՍՓ. Ճիշտ ե այդ, բայց դու սխալվում ես:
Յես ցավ չունեմ: Ուրախությունն ե, վոր ճշն-
շում ե իմ հոգին:

ՉԱՐՈՒՀԻ. Այդ ուրախությունն ե ձեր ցավը, Քրիս-
տափոր իվանիչ:

Աննան նորից մոտենում ե լուսամուտին յեվ դիտում:
Աչիքը ցածմալից են: Քրիստափորի շարժումից վա-
թեցում ե, վոր կնշմարվի, հեռանում ե:

ՔՐԻՍՏԱՍՓ. Ուրախությունն ե իմ ցավը, այո:
Կուրքյուն:

ՉԱՐՈՒՀԻ. Յես ուրիշ բան եմ մտածում, Քրիս-
տափոր իվանիչ:

ՔՐԻՍՏԱՍՓ. Ասա:

ՉԱՐՈՒՀԻ. Դուք քիչ եք դատել նախքան սիրելը:

ՔՐԻՍՏԱՍՓ. Քիչ եմ դատել:

ՉԱՐՈՒՀԻ. Այո:

ՔՐԻՍՏԱՍՓ. Բոլորովին չեմ դատել, Զարուհի, միայն
զգացել եմ:

ՉԱՐՈՒՀԻ. Սխալ եք զգացել:

ՔՐԻՍՏԱՍՓ. Զգացումը սխալ չի կարող լինել:

ՉԱՐՈՒՀԻ. Ուրիշ...

ՔՐԻՍՏԱՍՓ. (Ընդհատելով) Մուրթ ե այդհարցը, Զարու-
հի, վոչ վոք չի կարող լուծել: Միտում ես և
ամեն ինչ վերջացավ:

ՉԱՐՈՒՀԻ. Վախճանը:

ՔՐԻՍՏԱՍՓ. Սերն իր վրա կվերցնի ամբողջ ուսիլը:

ՉԱՐՈՒՀԻ. Ամբողջ վողբերգությունը:

ՔՐԻՍՏԱՍՓ. Սերը ֆորմուլա չե, Զարուհի:

ՉԱՐՈՒՀԻ. Ճիշտ ե, ֆորմուլա չե:

ՔՐԻՍՏԱՍՓ. Սերը տարերք ե, մթին և անլուծելի տա-
րերք (ձեռք դնելով Զարուհու ուսին): Դու կա-
րող ես բացատրել, թե ինչո՞ւ քիմիայում յեր-
կու տարր իրար քաշում են, և յերկու ուրիշ
տարր՝ իրար վանում:

ՉԱՐՈՒՀԻ. Վհչ:

Աննան նորից մոտենում ե լուսամուտին, տեսնելով Քր-
իստափորի ձեռք Զարուհու ուսին՝ այլանդակվելու
առաջնան զայրանում ե, բայց չկարողանալով յերկար
դիմանալ՝ փախում ե:

ՔՐԻՍՏՍՖ. Դու կարճդ ես բացատրել, թե ինչու յերկու տարր իրար քաշում են, փաթաթվում, նույն նախում իրար մեջ և միառժամանակ հետո, նույն տարրերը բաժանվում են իրարից՝ այս անգամ բոլորովին այլ բնույթներով:

ՋԱՐՈՒՀԻ. Վնչ:

ՔՐԻՍՏՍՖ. Ահա և սերը: Տարերք և, Ջարուհի, անլուծելի, անսկիզբ և անվախճան:

ՋԱՐՈՒՀԻ. Անսկիզբ և անվախճան...

Կուրքում:

ՔՐԻՍՏՍՖ. (Յաճը յեվ խորը ձայնով) Ջարուհի, սիրելի ես յերբեկեցի:

ՋԱՐՈՒՀԻ. (Գլուխը կախելով) Չգիտեմ:

ՔՐԻՍՏՍՖ. Չգիտեմ:

ՋԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ, յես Հափազանց շատ մտածեցի սիրելուց առաջ:

ՔՐԻՍՏՍՖ. Այնուամենայնիվ՝ սիրելի ես:

Անճամ նորից ե մայում լուսամուտից: Ահավոր դեմք ունի նա: Տեսնում ե, վոր Ջարուհին գլուխը կախ, ամառք-խաճ գլխի շարժում ե անում:

ՋԱՐՈՒՀԻ. (Գլխի համաձայնությամբ տարժում անելուց հետո՝ գլուխը վեր ե բարձրացնում յեվ տեսնելով Անճային, անաբեկվում ե, բայց իրեն զսպում) Քրիստափոր Իվանիչ, յես գնում եմ:

ՔՐԻՍՏՍՖ. Նստի՛ր, խոսում ենք, մենք միմեծ ենք: Մեր մենք դա, միասին կսկսենք աշխատանքը:

ՋԱՐՈՒՀԻ. (Անճանգիտ եմ մայում ե լուսամուտին, վորովհետեւ Անճան չի հեռանում յեվ աչքերը չոսած, կիսախեղագառի նման, մայում ե Ջարուհուն) Քրիստ-

տափոր Իվանիչ, թույլ տվեք գնամ (վոսի ե կանգնում):

ՔՐԻՍՏՍՖ. (Բռնելով նրա ձեռքը յեվ ինչ վոր գլխի բնկնելով՝ դառնում ե լուսամուտ, բայց Անճան անմիջապես կորսվում ե: Քրիստափոր միամտանում ե) Նստի՛ր, ասում եմ:

ՋԱՐՈՒՀԻ. Վնչ, վնչ, յես պետք ե գնամ (ազատվելով նրա ձեռքից՝ վազում ե դեպի աշխատանք):

Այդ պահին Անճան նորից ե մայում լուսամուտից յեվ տեսնելով Քրիստափորին սենակ, խուժում ե ներս: Քրիստափորը տեսնելով նրան ահավոր մայվածքով յեվ այլախաղած դեմքով՝ հանգիստ տոնով:

ՔՐԻՍՏՍՖ. Ի՞նչ ե պատահել, Աննա:

ԱՆՆԱ. Ո՞վ կար այստեղ:

ՔՐԻՍՏՍՖ. Ջարուհին:

ԱՆՆԱ. Պոռնիկը:

ՔՐԻՍՏՍՖ. Աննա, հանդուսացիր:

ԱՆՆԱ. (Վոսը գետին խփելով) Պոռնիկը ասում եմ:

Քրիստափորը ցնցվում ե յեվ տիրում ե լուրջում:

ԱՆՆԱ. Յես գտել եմ այն կինը, վոր փորում ե իմ գերեզմանը:

ՔՐԻՍՏՍՖ. (Հանգիստ յեվ խորեմ բնկած ձայնով) Այն կինը, վոր փորում ե քո գերեզմանը, դու ես:

ԱՆՆԱ. (Առանց ուշադրություն դարձնելու նրա ասածին) Այստեղ, իմ տանը, իմ աչքերի առաջ:

ՔՐԻՍՏՍՖ. Միալվում ես, Աննա:

ԱՆՆԱ. Վնչ:

ՔՐԻՍՏՍՖ. Միալվում ես:

ԱՆՆԱ. Յես դիտում եյի քեզ լուսամուտից ամբողջ կես ժամ:

ՔՐԻՍՏՈՍՓ. Յե՛մ ի՞նչ տեսար:

ԱՆՆԱ. Տեսա ամեն բան:

ՔՐԻՍՏՈՍՓ. Վոչինչ չես տեսել դու:

ԱՆՆԱ. Տեսել եմ ձեր ամբողջ լիտիությունը: Այդ եր պահաս, վոր շնանայիք բաց վարագույրն երի առաջ:

ՔՐԻՍՏՈՍՓ. (Ջանալով հանգստացնել) Աննա, յերևակայությունը քեզ տանջում ե (մոտենում ե նրան յե՛կ ուզում ե ձեռքս):

ԱՆՆԱ. Ձեռք:

ՔՐԻՍՏՈՍՓ. Աննա, վերջ տուր:

ԱՆՆԱ. Ո՞վ պիտի վերջ տա, դժու թե յեմ:

ՔՐԻՍՏՈՍՓ. Չարուհին անմեղ ե:

ԱՆՆԱ. Պոռնիկը... Անմեղ... (հիստերիկ ծիծաղ):

ՔՐԻՍՏՈՍՓ. Անիծված լինի այն ուրը, վոր յեմ պատահեցի քեզ:

ԱՆՆԱ. Այո, անիծված լինի, հազար անգամ անիծված լինի:

ՔՐԻՍՏՈՍՓ. Ո՛ր, իմ սև թրը:

ԱՆՆԱ. Դուրս պիտի վաճառես այդ պոռնիկին աշխատանոցից:

Մտնում ե Ռիմա:

ՔՐԻՍՏՈՍՓ. Աննա, այդ բառն այլևս չեմ ուզում լսել:

ԱՆՆԱ. Պետք ե ասեմ, ուրիշ անուն չեմ կարող տալ: Պոռնիկ ե նա:

ՌԻՄԱ. Մամա...

ՔՐԻՍՏՈՍՓ. (Յասկոս յե՛կ բարձր Ամենային): Լռի՛ր:

ԱՆՆԱ. Չեմ լռելու, մինչև դուրս չվաճառես նրան:

ՌԻՄԱ. Վաճառելու կարիք չկա, կարելի ե առանց վաճառելու գնալ:

ՔՐԻՍՏՈՍՓ. Չեմ վաճառի, Չարուհին անմեղ ե:

ՌԻՄԱ. (Գլխի քնկնելով, վոր խոսքն իր մասին չե՛ տուցե և փառում):

ԱՆՆԱ. Ռիմա, ամեն ինչ տեսա իմ աչքերով:

ՔՐԻՍՏՈՍՓ. Դու վոչինչ չես տեսել:

ԱՆՆԱ. (Չայրացած) Վոչինչ: Ո՞վ եր գրկել Չարուհուն ասա:

ՔՐԻՍՏՈՍՓ. Վոչինչ չեմ կարող պատասխանել մի խելագար կնոջ:

ԱՆՆԱ. Խելագար:

ՔՐԻՍՏՈՍՓ. (Չայրացած) Այո:

ՌԻՄԱ. Մամա, նա անմեղ ե, ամենափոքրիկ կասկածը մի ունենա նրա վրա (գնում ե մոտ մոտ, գրկում ե նրան):

ԱՆՆԱ. (Ստամենքը կրճատացնելով) Ռիմա, յես գտել եմ այն կինը, վոր ինձ խանդարում ե, վոր փորում ե իմ գերեզմանը:

ՌԻՄԱ. Վոչ, մամա, չես գտել:

ԱՆՆԱ. Գտել եմ:

ՌԻՄԱ. Վոչ:

ԱՆՆԱ. Յես տեսել եմ ամեն ինչ, վոչ վոչ չի կարող ինձ հակառակը պնդել:

Ներս ե մտնում Չարուհին:

ՉԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչ...

ԱՆՆԱ. (Խայքվածի նման յեսել և դառնում յե՛կ խելագարի պես նշում) Դժուրս, դժուրս, դժուրս այս տանից:

ՌԻՄԱ. Մամա (բռնում է նրա բերանը):

ՔՐԻՍՏԱՓ. (Ընդառաջելով Ջարուհուն) Ջարուհի, սիրելիս, մի պատասխանիր, գնա, յես հետո քեզ կբացատրեմ:

ԱՆՆԱ. (ձգնում է բերանն ազատել, բայց Ռիման չի բողմում):

ՌԻՄԱ. Ջարուհի աղաչում եմ քեզ:

ՋԱՐՈՒՀԻ. (Լուռ հեռանում է):

ԱՆՆԱ. (Ազատելով բերանը) Սիրելիս... պետք է մարդ պատուած լինի ամօթի ամենավերջին քողը:

ՌԻՄԱ. Քրիստափորը Իվանիչ, պահիր լռություն, աղաչում եմ:

ԱՆՆԱ. Աղաչելու վոչինչ չկա: Նա վոչինչ չունի խոսելու:

ՔՐԻՍՏԱՓ. Խոսելիք շատ ունեմ:

ԱՆՆԱ. Այո, միայն խոստովանելու քո հանցանքը:

ՌԻՄԱ. Աղաչում եմ, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. (Ինքնիրեն) Խեղճ, անմեղ աղջիկ:

ԱՆՆԱ. Անմեղ:

ՔՐԻՍՏԱՓ. Այո բացարձակապես:

ԱՆՆԱ. Սրիկա:

ՌԻՄԱ. Ահ...

Աննան խելագարի մեան վազում է դուրս պատշգամբի դռնով: Ռիման վազում է նրա յետովից: Քրիստափորը մի պահ փաթցած մնում է յեվ տալա դանդաղ ու խորք ընկած ձայնով:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, յեթե դու հազարավոր մագիլներ ել ունենաս, այլևս չես կարող հասնել իմ սրտին:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿԻՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Աշխատանք:

Վարպույրը քացվելուց հետո մի պահ բեմը դատարկ է մնում:

ԱՆՆԱ. (Մտնում է հուզված յեվ չոած աչքերով: Նախ զգուշությամբ խուզարկում է բոլոր անկյունները, վստահ լինելով, վոր վոչ վոք չկա ամբողջ աշխատանքում, մոտենում է անկյունի սեղանին, վորի վրա դրված է ջրի շիշ, ծոցից դուրս է բերում քղբի մեջ փաթարված բույնը, նորից նայում է չորս կողմը յեվ սկսում է լցնել ռեի մեջ):

ՌԻՄԱ. (ձիւս այդ ժամանակ հայտնվում է դռան շեմքին յեվ տեսնում է ռեի մեջ բույն քափելը) Մամա...

ԱՆՆԱ. (Ահաբեկված յեվ նչոցով յես է դառնում) Ահ...

ՌԻՄԱ. (Մոտենում է, բռնում նրա ուսերից) Մամա,

ի՞նչ արիր:

ԱՆՆԱ. Վոչինչ:

ՌԻՄԱ. Յես տեսա:

ԱՆՆԱ. Դու վոչինչ չտեսար:

ՌԻՄԱ. Տեոս:

ԱՆՆԱ. Զեարդիւ, թե չտեսար:

ՌԻՄԱ. Ի՞նչ արիր:

ԱՆՆԱ. Վոչինչ, ասում եմ:

ՌԻՄԱ. Մամա, ի՞նչ պրիւր ջրի մեջ, ասա:

ԱՆՆԱ. Թույն:

ՌԻՄԱ. Ա՛հ...

ԱՆՆԱ. Ինձ թունավորեցին, իրենք ել պետք ե թու-
նավորվին:

ՌԻՄԱ. Ո՞ւմ համար ե թույնը:

ԱՆՆԱ. Զարուհու:

ՌԻՄԱ. Իսկ յեթե Գրիստափորը...

ԱՆՆԱ. Նա ել թող զնա մահվան ծոցը:

ՌԻՄԱ. Մամա...

ԱՆՆԱ. Լոբբ, դու յերեխա ես դեռ:

ՌԻՄԱ. Յես կզգուշացնեմ բոլորին:

ԱՆՆԱ. Դու այդ չես անի:

ՌԻՄԱ. Կանեմ:

ԱՆՆԱ. Ռիմա,

ՌԻՄԱ. Մամա, զսպիր քեզ:

ԱՆՆԱ. Վոչ, յես գտել եմ այն կինը, վոր ինձ խան-
գարում ե, վոր փորում ե իմ գերեզմանը:

ՌԻՄԱ. Զես գտել:

ԱՆՆԱ. Դա եմ:

ՌԻՄԱ. Սխալվում ես:

ԱՆՆԱ. Գոյություն ունի այդպիսին:

ՌԻՄԱ. Թերեա, մամա, թերեա գոյություն ունի այդ-
պիսին, բայց Զարուհին չե, յես գիտեմ, վոր Զա-
րուհին չե, նա անմեղ ե, մամա, նա անմեղ ե

այնպես, ինչպես մի աղջիկ, վոր քո ամուսնուն
թերեա կյանքում չի հանդիպել:

ԱՆՆԱ. Ինչո՞ւ ես դու պաշտպանում այդ անզգամին:

ՌԻՄԱ. Վորովհետեւ այդպիսին չե, մամա: Մի քիչ
հանգստացիր, մի քիչ մտածիր, մի քիչ անտար-
բեր մնա, վստահացնում եմ քեզ, ամեն ինչ:
Ինքնաբերաբար վերջ կգտնի: Մի պզճի քո ձեռ-
քըն անմեղ մի աղջկա արյունով: Այդ արյունը
քեզ կայրի, մինչև գերեզման: Մամա, մամա
(սկսում ե հեկեկալ):

ԱՆՆԱ. Ռիմա, դու անմեղ մի հրեշտակ ես և կար-
ծում ես, վոր քո շրջապատի բոլոր մարդիկ ել
այդպես են: Պետք ե ալրեմ յես իմ կյանքը
թունավորողների սիրտը:

ՌԻՄԱ. (Գլուխը բարձրացնելով) Մամա, պիտի սիրա ես
այրում:

ԱՆՆԱ. Վոչ:

ՌԻՄԱ. Այո:

ԱՆՆԱ. Գնանք այտեղից:

ՌԻՄԱ. Յես պետք ե մնամ մինչև նրանք գան:

ԱՆՆԱ. Գնանք (սկսում ե ֆաֆեել նրան):

ՌԻՄԱ. Թող մամա:

ԱՆՆԱ. Գնանք (ֆաֆեում ե):

ՌԻՄԱ. Թող, ասում եմ, չեմ գա:

ԱՆՆԱ. Զպետք ե մնաս այտեղ արի:

ՌԻՄԱ. (Լացով յեւ հեկեկաւում) Մամա, մամա, թող
ինձ, թող ինձ:

Մտնում ե Զարուհին:

ԶԱՐՈՒՀԻ. Աննա Դավիդովնա, ի՞նչ ե պատահել ձեզ:

ՌԻՄԱ. Չարուհի... (Բնկնում է գետին):

ՋԱՐՈՒՀԻ. Սա ինչ բան է, վերջապես (տառազ կռանում
է Ռիմայի վրա յեւ ֆննում է նրան):

ՋԱՐՈՒՀԻ. Կարծես ուշքը գնացել է:

Վազում է դեպի սեղանը. քանակոր շշից ջուր է ածում
բաժակի մեջ: Անճամ չափ աչքերով նայում է, բայց
յերբ բաժակը քերում է Ռիմային՝ ճշում է:

ԱՆՆԱ. Ա՛հ, ի՞նչ էք անում (հարձակվում է յեւ քա-
ծակը ձեռքից խլում): Չուր հարկավոր չէ նրան:

ՋԱՐՈՒՀԻ. Ուշքը վրան չէ:

ԱՆՆԱ. Վոչինչ (կռանալով Ռիմայի վրա) Ռիմա, Ռի-
մա (վրան բնկած հեկեկում է):

ՋԱՐՈՒՀԻ. Ի՞նչ սպասանեց այս մարդկանց:

ՌԻՄԱ. (Աչքերը դանդաղորեն բաց է անում, գլուխը
բարձրացնում վեր) Մամա:

ԱՆՆԱ. Ռիմա...

ՋԱՐՈՒՀԻ. (Գրկելով Ռիմայի գլուխը) Ուշքի յեկ, Ռի-
մա:

ՌԻՄԱ. Չարուհի... (Փաքալվում է նրան ջերմութեամբ):

ԱՆՆԱ. (Մոտենում է սեղանին, շիւթն ամբողջովին դա-
տարկում յեւ լուռ հեռանում):

ՌԻՄԱ. (Ընդոս դառնում է դեպի սեղանը յեւ դիտում շիւթը)
Ո՞վ դատարկեց շիւթը:

ՋԱՐՈՒՀԻ. Մայրդ:

ՌԻՄԱ. Մայրս...

Լաւրջուն:

ՋԱՐՈՒՀԻ. Վեր կաց, Ռիմա (ոգնում է վառ վեր կենա,
նսեցնում է արոտին) Հանկարծ բոլորդ գծվեցիք:
Սա ինչ բան է:

ՌԻՄԱ. Այո, բոլորս գծվեցինք:

ՋԱՐՈՒՀԻ. Յերանի՜ չվերադառնայիր:

ՌԻՄԱ. Այո, այո, յերանի՜ չվերադառնայի: Իմ վերա-
դարձով սկսվեց խելագարությունը:

ՋԱՐՈՒՀԻ. Ի՞նչպես պիտի լուծես այս խնդիրը, Ռի-
մա:

ՌԻՄԱ. (Փաքալվելով Ջարուհուն) Դու իմանում ես:
ՋԱՐՈՒՀԻ. Այո:

ՌԻՄԱ. Չարուհի, իմ քույրս... (Հեկեկում է):

ՋԱՐՈՒՀԻ. Հանգստացիր, Ռիմա, և պաղարյունու-
թյամբ վճռիր անելիքդ:

ՌԻՄԱ. Չարուհի, ի՞նչ կարող եմ անել:

ՋԱՐՈՒՀԻ. Այսպես թե այնպես՝ մի բան պիտի անես:

ՌԻՄԱ. Չարուհի, քանի վոր դու գիտես, իմացիր և
ավելին: Մայրս յեկել էր և թունաւորում էր
շիւթը ջուրը, յերբ յես վրա հասա:

ՋԱՐՈՒՀԻ. Քրիստափոր Իվանիչին թունաւորելու հա-
մար:

ՌԻՄԱ. Այո, և քեզ:

ՋԱՐՈՒՀԻ. Ահա թն ի՞նչ...

ՌԻՄԱ. Չարուհի, յես պետք է վերջ տամ այս բոլո-
րին, պետք է վերջ տամ:

ՋԱՐՈՒՀԻ. Իսկ Քրիստափոր Իվանիչը:

ՌԻՄԱ. Ո՛ր, յես չեմ կարող մայրտապան լինել, թող
մեռնի իմ սերը, թող իմ սիրտը նետեն ջը-
նեքի առաջ կամ սեփական աչքերիս առաջ այ-
րեն իմ սիրտը, ինքս թող ամբողջովին վոչնա-
նամ, ինձ վոչինչ, վոչինչ հարկավոր չէ, յես չեմ
կարող դավաճանել իմ սեփական մորը: Ո՛ր, ա-

մոթ ինձ, ամոթ, ամոթ, ամոթ...

ՁԱՐՈՒՀԻ. (Բռնեղով նրա գլուխը) Ռիմա, դա չի լուծի հարցը:

ՌԻՄԱ. Ո՛ր, յես մի ոձ եմ մարդկային կերպարանքով, մի զազրելի վորդ, վոր կրծում ե իր սեփական մոր սիրտը, չկա վոչ մի բառ, վորով կարելի լինի վորակել իմ ստորությունը: Յեթե Քրիստափորը չհասկանա իմ հոգու մորմոքը ու չհամաձայնվի՝ այն ժամանակ կա միայն մի յեղք — մահը:

ՁԱՐՈՒՀԻ. Դա չի փրկի քո մորը:

ՌԻՄԱ. Կփրկի:

ՁԱՐՈՒՀԻ. Վոչ յեթե գիտենա նա, վոր աչդախի մի սեր գոյություն ե ունեցել քո և իր պմուսնու միջև՝ նա կխելագարվի:

ՌԻՄԱ. Վոչ վոր չի իմանա, բացի քեզանից և Քրիստափորից:

ՁԱՐՈՒՀԻ. Ռիմա, յերեխա ես դու:

ՌԻՄԱ. Այո, յերեխա եյի, վոր սիրա տվի իմ մոր ամուսնուն:

ՁԱՐՈՒՀԻ. Ռիմա, ավելի խոր մտածիր:

ՌԻՄԱ. Յես ամբողջովին կքաշվեմ կույրերի աշխարհը, նրանք, վորոնք աչքեր չունեն, բայց տեսնում են հոգով, թող իմ տեսողությունը յեվս անեանա, յես չտեսնեմ վոչ մի գույն և ձև աշխարհում, չտեսնեմ վոչ մի ծաղիկ: Ո՛ր, ավելք ինձ միայն կույրերի տեսողությունը, ավելք ին կույր աչքերի պայծառատեսությունը: Զարուհի, միևնույն ե, յես այլևս վոչինչ չեմ տեսնում:

Յես նորից կլերադառնամ Մոսկվա, թող ամեն ինչ մոռացվի, թող ամեն ինչ մոխիր դառնա իմ սրտում: Յեթե Քրիստափորը հասկացավ՝ լավ, յեթե վոչ՝ գոյություն ունի մահը, ավելի ջերմ, քան իմ հարադատ մայրը:

ՁԱՐՈՒՀԻ. Ռիմա, դժբախտ ես դու:

ՌԻՄԱ. Այո, դժբաղտ եմ: Յեթե դժբաղտ չլինեյի, իմ հայրն ինձ կտաներ իր հետ, պապա, պապա...

ՁԱՐՈՒՀԻ. (Մոտենում ե դռանը յեվ ակամզ դնում) Քրիստափորը յեկավ:

ՌԻՄԱ. (Յավազին ուրախությամբ) Լավ ե, լավ ե (վսփի ե կանգնում յեվ սկսում ե մազերն ուղղել):

ՁԱՐՈՒՀԻ. Արդեն յերեկո ե, Ռիմա, խոսիր Քրիստափոր Իվանիչի հետ առավոտյան:

ՌԻՄԱ. Վոչ, վոչ, վոչ, հենց այժմ: Առավոտից առաջ ամեն ինչ պետք ե պարզվի, յես պետք ե տեսնեմ առավոտյան շողը պայծառ աչքերով, թեթեացած հոգով և անմորմոք սրտով (շտապում ե, մազերն ու շոերը շկելով): Յես պետք ե լրեսեմ արևի ճիշդ՝ ինչպես անմեղ դառնուկը մարգագետնի վրա:

ՁԱՐՈՒՀԻ. Գեթ պիտի համբերես մի քանի ժամ, վորովհետև յես գիտեմ, այսոր նա վճռական փորձ ե կատարելու. Ռիմա, յեթե դու սիրում ես ներան, չպետք ե փչացնես ամեն բան. յեթե նա այդ փորձն այսոր չկատարի, այլևս յերբեք չի կատարելու: Պատվի խնդիր ե, Ռիմա, հասկացիր:

ՌԻՄԱ. Հասկանում եմ:

ԶԱՐՈՒՀԻ. Յերկար ժամանակ ե՛նա աշխատում ե՛ս յդ
պրորբեմի վրա, արդեն հակառակորդները հար-
ցական են դրել նրա գիտական վարկի առաջ:
Թույլ տուր նրան կատարելու վերջին փորձը:
ՌԻՄԱ. (Անխուժանալով) Կհամբերեմ մի քանի ժամ
ևս: Զարուհի, քույր իմ (համբուռում ե նրան)
Պահիր այս գաղտնիքը մինչև մահ (վազում ե
դուրս):

ԶԱՐՈՒՀԻ. Խեղճ մանուկ...

Մտնում ե Քրիստափոր:

ՔՐԻՍՏԱՓ. Այստեղ ես, Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ. Վաղո՜ւց, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. (Հանելով պիջակը յնվ հագնելով սպիտակ
խալաքը) Այսորվա փորձի հաջողությունն այնքան
հավանական ե, վոր դողում եմ:

ԶԱՐՈՒՀԻ. Յեթե այդքան հավանական ե, ի՞նչու եք
դողում, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Հանկարծ հավանական կարծածդ, հավանա-
կան չեղավ:

ԶԱՐՈՒՀԻ. Սկսենք, Քրիստափոր Իվանիչ:

ՔՐԻՍՏԱՓ. Յես կարծում եյի, Ռիման այստեղ ե:

ԶԱՐՈՒՀԻ. Վո՛չ:

ՔՐԻՍՏԱՓ. Աննան ասաց, վոր այստեղ ե:

ԶԱՐՈՒՀԻ. Այո՛, այստեղ եր:

ՔՐԻՍՏԱՓ. Ո՞ւր գնաց:

ԶԱՐՈՒՀԻ. Զգիտեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Իսկ Աննան յեկամվ այստեղ:

ԶԱՐՈՒՀԻ. Այո՛:

ՔՐԻՍՏԱՓ. Բեզ հետ վորևե խոսակցություն ունեցամվ:

ԶԱՐՈՒՀԻ. Վո՛չ:

ՔՐԻՍՏԱՓ. Զարհուրելի եր նրա տեսքը:

ԶԱՐՈՒՀԻ. Ի՞նչպես:

ՔՐԻՍՏԱՓ. Զգիտեմ: Յեթե նրան տեսնեյիր՝ չեյիր
հանաչի:

ԶԱՐՈՒՀԻ. Ի՞նչ ե պատահել:

ՔՐԻՍՏԱՓ. Եհ, սկսենք մեր աշխատանքը:

Սկսում են աշխատանքը:

Վ. Ա. ՐԱԳՈՒՅՐ

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Պ Ա Տ Կ Ե Ր

Դաեղիքը:

Վարագույրը բացվելուց հետո քնմը դատարկ է: Աշխատանքի կողմից հեղափոխի պես մտնում է Քրիստափորը՝ ձեռքին մի բուլք:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիման, Ռիման... ամեն ինչ վերջացած է: Դանվեց: Հաջողեցինք: Հաղթություն: Այժմ ինչ ուզում ե պատահի: (Լուրջուն): Բայց ինչո՞ւ եմ կանչում: Արդեն կես գիշերն անց է, քնած կլինի նա (լուրջուն): Այս հարցը վերջացավ, այժմ իմ սրտի դռանը կանգնած է խոշորագույն մի հարցական, ահավոր մի հարցական: Ինչպես պիտի լուծվի այդ (լուրջուն): Յես կանգնած եմ անլուծելի մի հարցի առաջ: Ճիշտ եր ասում Ռիման, ինչո՞ւ վերադարձավ, կրակը վառվում եր, կդառնար մոխիր, և յեթե Ռիման չլիներ՝ մոխիրներից կբարձրանար փյունիկը՝ իբրև բոցավառ մի աղջիկը:

Մտնում է Ռիման պատշգամբից:
Ռիման, բոցավառ ծաղիկ, արի:

ՌԻՄԱ. Յես ծաղիկ չեմ, յես մի ոճ եմ մարդկային կերպարանքով: Քրիստափոր, պետք է վերջ տալ ամեն ինչի:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիման, դու այդպես ես դիմավորում իմ հաջողությունը:

ՌԻՄԱ. Ներքի ինձ.

ՔՐԻՍՏԱՓ. Ներքի ինչո՞ւ:

ՌԻՄԱ. (Չոֆելով առաջը) Քրիստափոր, դու գիտես, լոր սիրում եմ քեզ, իմ ամբողջ եյությամբ ձգտում եմ քեզ: Յես յերբեք չեմ յերազել, թե կյանքում առհասարակ կարող ե լինել այսպիսի յերջանկություն, բայց...

ՔՐԻՍՏԱՓ. (Կռանալով յեղ գրկելով Ռիմային) Բայց ի՞նչ:

ՌԻՄԱ. Պիտի վերջ տալ, Քրիստափոր, պիտի զոհնեմ ամեն բան:

ՔՐԻՍՏԱՓ. (Հուսահատ յեղ խորը) Ռիման...

ՌԻՄԱ. Թող լինի խավար գիշեր:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիման, վառվիր իմ սիրտը, տուր հրդեհին և հետո խոսիր այդպես:

ՌԻՄԱ. Քրիստափոր, անգոր եմ պայքարելու իմ սեփական մոր դեմ:

ՔՐԻՍՏԱՓ. Ռիման...

ՌԻՄԱ. Մոր դեմ պայքարելու վոչ արիություն ունեմ, վոչ զենք: (Խեղագորի նման վեր է բռնում, աննպաստ յեղ ջղային գալարումներով զառնում է սենյակում) Ո՛հ, ի՞նչ արի յես, ինչո՞ւ վերադարձա:

ՔՐԻՍՏԱՓ. Այո, ինչո՞ւ վերադարձար:

ՌԻՄԱ. Կգնամ, Կգնամ:

ՔՐԻՍՏՍՈՓ. (Բռնկելով նրան դանդիկի մեջտեղում) Ուշ է, Ռիմա:

ՌԻՄԱ. Քրիստափոր, դու պիտի հասկանաս ինձ, դու պիտի ազատես ինձ անավոր հրդեհից:

ՔՐԻՍՏՍՈՓ. Ռիմա, ինքնասպանություն ես առաջարկում:

ՌԻՄԱ. Այո, ինքնասպանություն, մենք պետք է սպանենք մեզ: (Հուսահատ հիշով) մամա... մամա (չոփում է գեսիկը): Մեղավոր եմ յես քո առաջ, մամա, յերդվում եմ՝ այս բոլորից վնասի կապ չունենալ այն մարդու հետ, վորի համար դու զոհեցիր իմ հորը: Մամա, յես ներել եմ քեզ, դու ել ինձ ներիր:

ՔՐԻՍՏՍՈՓ. Ռիմա, այդ բոլորից հոտո ինձ մնում է բերել մի բաժակ թույն, Կիսինք և խմենք միասին (վեր է բարձրացնում նրան): Ռիմա, յես պատրաստ եմ, ուրախությամբ, այնպիսի ուրախությամբ, ինչպիսի ուրախությամբ քեզ համբուրել եմ առաջին անգամ՝ խմելու մահվան բաժակը:

ՌԻՄԱ. Դա չի փրկի իմ մորը:

ՔՐԻՍՏՍՈՓ. Կփրկի մեզ:

ՌԻՄԱ. Յես մեր փրկության մասին չեմ մտածում, Յես ուզում եմ փրկել մի մայր...

ՔՐԻՍՏՍՈՓ. Ուրիշ ճանապարհ չկա:

ՌԻՄԱ. Կա Քրիստափոր: Յես կհեռանամ այս քաղաքից, դու չես իմանա իմ տեղը, չես արտասանի և չես հիշի իմ անունը և վնաս վոք ել թող չիմա-

նա, թե ինչ կատարվեց... (սկսում է գնալ):

ՔՐԻՍՏՍՈՓ. (Առաջը կտեղով) Ռիմա:

ՌԻՄԱ. (Ուզում իմ ազատել) Քրիստափոր, ազատ արձակիր իմ սիրտը:

ՔՐԻՍՏՍՈՓ. Իսկ իմ սիրտը:

ՌԻՄԱ. Ազատիր ինձ այս կրակե շղթայից:

ՔՐԻՍՏՍՈՓ. Յես ինքս պաշարված եմ կրակե ողակով:

ՌԻՄԱ. Քրիստափոր, թող ինձ:

ՔՐԻՍՏՍՈՓ. Գնանք միասին:

ՌԻՄԱ. Դու ինձ չես հասկանում: Յես ուզում եմ վերականգնել նախկին դրությունը: Սիրիր ում վոր ուզում ես, դավաճանիր մորս, բայց յես չլինեմ:

ՔՐԻՍՏՍՈՓ. Ռիմա, ո՛ր, ինչ լավ կլինեիր չվերադառնալի:

ՌԻՄԱ. Ուրեմն թույլ տուր նորից հեռանալ:

ՔՐԻՍՏՍՈՓ. Դա չի լինի միևնույնը:

ՌԻՄԱ. Թող ինձ:

ձգնում է փախչել: Քրիստափորը չի բողոքում: Ռիման միայն կրկնում է շրջի՛մ, քո ինձ, քո ինձ: Այդ ժամանակ զայն բաղժում են դուրը:

ՔՐԻՍՏՍՈՓ. (Շուրկով) Ո՞վ կարող է լինել:

ՌԻՄԱ. Մաման է, Քրիստափոր, յես կորած եմ:

ՔՐԻՍՏՍՈՓ. Նա քնած է:

ՌԻՄԱ. Այս մեր արարքը կարող է մահն անդամ զարթեցնել:

ՔՐԻՍՏՍՈՓ. Զարուհին է: Յեթե նա լինեիր՝ կգար պատշաճ մրով:

Նորից բաղժում են դուրը:

ՌԻՄԱ. Յեա փակել եմ յետևի դուռը: Մաման ե:
ՔՐԻՍՏԱՓ. Վնչ, նա չե:

ՌԻՄԱ. (Դողդոջուն լինելով - հուսահատ ծռուկով) Մաման,
գնա և քնի՛ր հանդիստ, ինձ մի տեսնի աշատեղ,
ահա վերջացնում եմ ամեն ինչ, բայց եմ անում
քո ճանապարհը, վերցնում եմ ինձ, վոր դաժան
քաշի նման խոչընդոտում եմ քո սիրո ճանա-
նապարհը:

Նորից բաղխում եմ դուռը:

ՔՐԻՍՏԱՓ. Անցի՛ր շիրմայի յետև: Միայն Ջարուհին
կարող է լինել:

ՌԻՄԱ. Վնչ մաման ե: Ջարթել ե մահը:

Ռիման վազում է, պահվում շիրմայի յետևի: Քրիս-
տափորը բաց է անում դուռը: Ներս է մտնում Աննան
դժգույճ՝ ցափոտ:

ԱՆՆԱ. Քրիստափոր կին կա աշատեղ:

ՔՐԻՍՏԱՓ. Վնչ:

ԱՆՆԱ. Կա:

ՔՐԻՍՏԱՓ. Հանգստացիր, Աննա, մինչև խելագարու-
թյունը մի քայլ ե մնացել արդեն:

ԱՆՆԱ. Վնչ մի քայլ, արդեն հասել եմ:

ՔՐԻՍՏԱՓ. Ճիշտ ե:

ԱՆՆԱ. Քրիստափոր, ինձ համար ամեն ինչ կորած է
և կորած է այն մոմենտից, յերբ յես քո հասցեյին
արտասանեցի՝ սրելիկա բառը, մի մարդու՝ վորին
սիրել եմ իմ մարմնի և հոգու բոլոր մասնիկնե-
րով. դրանից հետո վոչինչ չի մնում ինձ, մի-
այն յես ուղղում եմ՝ հաստատել և քո ստախո-
սությունը: Կին կա աշատեղ:

ՔՐԻՍՏԱՓ, Կարող ե պատահել, բայց թնչ տեսակ
կին:

ԱՆՆԱ. Պոռնիկ:

ՌԻՄԱ. (Շիրմայի յետևից) Ահ...

ԱՆՆԱ. Ահա և նրա ձայնը (բարձր) պոռնիկը...

ՔՐԻՍՏԱՓ. Աննա, դաշույն ես խրում քո սրտի մեջ:

ԱՆՆԱ. Այդ դաշույնը խրում է նա, նա, այդ...

ՔՐԻՍՏԱՓ. (Ընդհատելով) Լռի՛ր:

ԱՆՆԱ. Թող դուրս գա:

ՔՐԻՍՏԱՓ. Պոռնիկ չկա աշատեղ:

ԱՆՆԱ. Յեթե պոռնիկ չե՞՞ ինչ՞ե՞ և պահվում:

Վազում է դեպի շիրման:

ՔՐԻՍՏԱՓ. Աննա...

Աննան բաց է անում շիրման:

ՌԻՄԱ. Մաման...

ԱՆՆԱ. (Կարկամելով յեվ յիս-յիս գնալով) Ռիմա...

ՌԻՄԱ. (Վազում յեվ չնոսում է նրա առաջ) Մաման,
ճշմարիտ ես, յես պոռնիկ եմ:

ՔՐԻՍՏԱՓ. Ամեն ինչ վերածվեց մի գորշ մոխրակույ-
տի:

Աննան քնշուքյամբ յեվ դողալով գրկում է Ռիմային,
վեր է բարձրացնում:

ԱՆՆԱ. (Յերկար, յերկար նայելով նրան) Ռիմա, իմ ար-
յան կաթիլ...

Համբուրում է նրան, յեվ գլուխը կախ, դանդաղ՝ փայ-
լքով առաքանում է դեպի պատշգամբ: ԿՊատշգամբից
նորից նայում է Ռիմային յեվ Քրիստափորին, յեվ յետ-
յիտ գնալով՝ իրեն ձգում է պատշգամբից՝ ներքով:

ՌԻՄԱ. (Խելագար նիչով) — Մաման... (Վազում է դեպի
պատշգամբ):

ՔՐԻՍՏՈՓ. (Նույնպես խելագար ձայնով)—Ահնա...

(Վազում է պառզամբ):

Քրիստափորը յեղ Ռիման տեսքեկված հայում են պատըշ-
գամբից մերժել:

Վ Ե Ր Ձ

ՀՀ Ազգային գրադարան



NL0333257

31384